The text of the 2008 version of Article 301 also comprises four paragraphs, each of which is represented by a declarative utterance. The pragmatic consideration shows that these utterances, like the ones in the previous version, should be adequate in the genre of official legal documents and function as statements devoid of any emotive charge or double interpretation. In fact, they should be expressions of truth concerning the state policy. However, the analysis comes to prove that the structural pattern of the statements (1) and (2) used in this version has changed, thus leading to some kind of implicit pragmatic transposition of the speech acts. The simple extended sentences used in Article 301 (2005) are replaced by complex sentences with restrictive relative clauses in the amended version. What has changed? In fact, in the restrictive relative clauses the doer of the action, though indefinitely, is indicated: *A person who*

⁸⁸ In 2006 five journalists were charged with insulting the judicial institutions of the State; they had criticized a court order to shut down a conference on the Ottoman Armenian casualties in the Ottoman Empire during WWI. The charges potentially presupposed up to a 10-year term of imprisonment. As the statute of limitation had run out, exceeded, the charges against four of them were dropped by the court on April 11, 2006, while the fifth, Murat Belge, was acquitted only on June 8, 2006. Cf. *Murat Belge, a Renowned Turkish Academic, Leaving Turkey as 'Scholar at Risk'*// SCF, February 15, 2018.

[...]. Furthermore, since the principal clause is in the passive voice, the doer of the action mechanically becomes the bearer of the action: *shall be sentenced*. It is quite clear that the aforementioned action has a certain negative effect and inflicts a perspective of punishment on the doer of the undesirable action. The verb in the restrictive relative clause names the undesirable action (*publicly degrades*) on the part of the doer who will be punished for that.

As can be seen, statements (1) and (2) undoubtedly satisfy the following felicity conditions of directive speech acts:

- propositional content condition: future act of the hearer;
- preparatory condition: the speaker believes the hearer is able to take action; the speaker has authority over the hearer;
- sincerity condition: the speaker wants the hearer not to act;
- essential condition: an attempt to get the hearer to abstain from doing something.

Thus, despite being assertives, statements (1) and (2) conform to the felicity conditions of directives. Moreover, these speech

acts show world-to-words fit like other directives, contrary to assertives that show words-to-world fit⁸⁹.

These considerations may bring statements (1) and (2) close to an indirect warning, such as:

Do not publicly degrade Turkish Nation, State of the Turkish Republic, Turkish Grand National Assembly, the Government of the Republic of Turkey and the judicial bodies of the State, or you shall be sentenced a penalty of imprisonment for a term of six months to two years.

These statements can also be interpreted as indirect threat where the main clause names the harmful action while the if-clause bears the implicature of some probable undesirable future action on the part of the doer (that will harm the doer), for example:

⁸⁹ The term *direction of fit* is used in philosophy, describing the relation between interrelated opposing concepts. It was used by J. Searle when creating his taxonomy of speech acts. In the world-to-words fit, e.g. command, order, warning, the world must change to match the propositional content of the utterance. The word-to-world direction of fit indicates that the propositional content of the utterance corresponds to the state of things in the world, e.g. asserting, stating. Cf. Searle J. R. (1979) *A Taxonomy of Speech Acts* // Searle J. R., *Expression and Meaning: Studies in the Theory of Speech Acts*. CUP, Cambridge, pp. 1-19.

If you publicly degrade Turkish Nation, State of the Turkish Republic, Turkish Grand National Assembly, the Government of the Republic of Turkey and the judicial bodies of the State, you shall be sentenced a penalty of imprisonment for a term of six months to two years.

This kind of pragmatic transposition of the illocutionary act can be called manipulative since not only the indication of illocutionary force is changed from direct to indirect, but also the actual force of the speech act is veiled and becomes ambiguous. As for the perlocutionary effect of the speech acts, we can state that the speech acts in the 2008 version have a similar effect, that of prohibition, which has become more pronounced. As can be seen, by changing the structure of the sentences and the wording of the document, its authors have made it more expressive and categorical. Meanwhile, the pragmatic organization of the document has become more practical, making the realization of power more effective. Therefore, we can conclude that in the version of 2008 manipulation of language is observed which serves the purpose of reinforcing power through language use.

Paragraph (3) presents the same statement as in the version of 2005, with some reformulation which, however, is manipulative. If we try to consider the reason why the expression *intended to criticize* is substituted for *for the purpose of criticism*, we come to the conclusion that intended action or intention is what one wants to do, while purpose is one's reason for doing something. The reworded version means that when a person expresses his/her personal evaluation ("opinion") of certain phenomena with the aim of criticizing, this kind of action is not punishable. Unlike *thought* which is closer to conscious mental actions, *opinion*, as we know, is what one thinks or feels about something, i.e. his/her personal viewpoint or attitude towards something. *Opinion*, we might say, is a more subjective expression of one's mind, and therefore, we can conclude that in this paragraph the legislators have retained the covert "linguistic space" for subjective interpretation of language data, which existed in the 2005 version.

We shall now try to examine the controversy and semantic ambiguity that derives from the term *Turkishness*⁹⁰ along with

⁹⁰ *Turkishness* is rendered in the OSCE (Organization for Security and Co-operation in Europe) translation as *being a Turk*. Cf. *OSCE Representative on Freedom of the Media – Review of the Turkish Penal Code*. (2005) // Organization for Security and Co-operation in Europe. Vienna, p. 10.

some judicial interpretations of the word. The drafters of the first version explain their preference for the term *Turkishness* over *Turkish nation* in the second version of the Article by the possible indication in the term of a common entity sharing a common culture, peculiar to the Turks in and outside Turkey, while the attributive combination *Turkish nation* narrows the meaning of the term without directly mentioning the participants of the same culture⁹¹. This argument is the direct reflection of the ideal of pan-Turkism and demonstrates the attachment the founders of modern Turkey had to it. Moreover, it maintains the values adopted by Atatürk a century earlier, adhered to up until today “but gives little indication, if any, on how and under which circumstances the article could be applied”⁹². It is evident that the manipulation of the term *Turkishness* leads to the impossibility of its interpretation: neither *Turkishness*, nor its constituent elements, can be clearly defined. Without a transparent definition, it is not easy to decide who will be considered as *denigrating* it. This means the whole politically incorrect phrase is a serious blow to the right of

⁹¹ Cf. Algan, B. (2008) *The Brand New Version of Article 301 of Turkish Penal Code and the Future Freedom of Expression Cases in Turkey* // German Law Journal, Vol. 09, N° 12, p. 2242.

⁹² Cf. Tamvaki, E. (2009) *A Law and Literature Approach to Oppression of Identity in Turkey*, p. 24.

freedom of expression and a serious violation of it. The above-mentioned court cases and prosecutions show that the Turkish authorities intended to use and did use *Turkishness* based on race and religion against dissenting opinion, against people who tried to find the historical truth about Turkey. Conceptually, the replaced term *Turkishness* (or *being a Turk*) emphasizes nationality conditioned by race, religion, language, culture, aims and purposes. In the same way, in the new phrase *Turkish nation* the word *nation* indicates people, tribe, kin in a group or collective of people with such common characteristics as language, tradition, customs, habits and ethnicity. It is a cultural-political community that has become conscious of its autonomy, unity, and particular interests. By comparison, a nation is more impersonal, abstract, and overtly political than an ethnic group⁹³.

Thus, it follows that *Turkishness* and *Turkish nation* have the same semantic meaning and content and do not represent

⁹³ Cf. James, P. (1996) *Nation Formation: Towards a Theory of Abstract Community*. London: Sage; Hroch M. (1996) *Nationalism and National Movements: Comparing the Past and the Present of Central and Eastern Europe* // *Nations and Nationalism*, N 2 (1), pp. 35-44:

different distinct notions⁹⁴, and although the drafters claimed that *Turkishness* is abstract and its replacement with the concrete wording *Turkish nation* would *broaden the frontiers of freedom of expression*⁹⁵, it actually did not.

Speaking about the notion of *Turkishness* from the perspective of pragmatics and Critical Discourse Analysis, it should be stated that the interpretation of this cultural construct is based on the presuppositional pool of the hearer or reader, their background knowledge. This kind of knowledge is specifically culture-based and abstract. Hence, it is hard for a foreigner or outsider to define which ideas that evaluate the historical events or facts, public figures, cultural values and so on negatively should be considered as denigrating Turkishness. Naturally, the use of this linguistic element leaves a broad space for restrictions and taboos in public-oriented speech.

The act of increasing the terms of the punishment in paragraph (3) also has to do with the political situation, since a large number of Turkish citizens have emigrated to different parts of the world. Many of them have a negative attitude to

⁹⁴ Cf. Tamvaki, E. (2009) *A Law and Literature Approach to Oppression of Identity in Turkey*, p. 26.

⁹⁵ Cf. *CGK, E. 1998-9/70, K. 1998/156, Judgement of 5 May 1998*. Cf. also Algan, B. *Ibid*, p. 2242.

Turkey and its policy and, therefore, express oppositional ideas abroad. The reason for the punishment leveled upon them is worded by *Turkishness* which, as we stated above, is a vague idea for most Europeans and Americans. This means that the Turkish government can claim any idea expressed by its citizens in another country as *denigration of Turkishness* and prosecute them for their ideas, viewpoints which may prove to be unfavourable to the official circles of Turkey. Thus, it is not difficult to see that this statement clearly breaks human rights for speech, for the expression of one's opinion in public.

Again, pretending to *broaden the frontiers of freedom of expression*⁹⁶, the drafters amended the term *the Republic* into *State of the Turkish Republic / State of the Republic of Turkey*. According to the Word Reference Random House Unabridged Dictionary of American English⁹⁷, *a republic is a state in which the supreme power rests in the body of citizens entitled to vote and is exercised by representatives chosen directly or indirectly by them*. The same dictionary defines *a state as a politically unified people occupying a definite territory*. According to the

⁹⁶ Cf. CGK, E. 1998-9/70, K. 1998/156, judgement of 5 May 1998.

⁹⁷ *Word Reference Random House Unabridged Dictionary of American English*. (2017).

Word Reference English Thesaurus⁹⁸ the two terms are synonymous (*republic = state, democratic state*). Similarly, one of the decisions of the Turkish Supreme Court of Appeals says, “What is meant by the term Republic is the State of the Republic of Turkey”⁹⁹. Thus, the words *republic* and *state*, as far as the character of these notions is concerned, are the same. The change just clarifies the wording but contextually cannot be justified. The abuse underlies the false notion that the concrete expression *State of the Turkish Republic* contributes to the expression of freedom, while *the Republic*, due to its abstract character, does not. As the Amnesty International report highlights, “Article 301 of the Turkish Penal Code has long been one of the most problematic articles as far as freedom of expression is concerned. Up until 2008, the Article criminalized *denigrating Turkishness*. Reforms replaced *denigrating Turkishness* with *degrading the Turkish nation, the State of the Republic of Turkey, the Turkish Parliament (TBMM*¹⁰⁰), *the government of the Republic of Turkey and the legal institutions of the state* and put in the additional requirement of the authorisation

⁹⁸ Cf. *Word Reference English Thesaurus*. (2017).

⁹⁹ Cf. Algan, B. *Ibid.*, p. 2242.

¹⁰⁰ TBMM stands for the Grand National Assembly of Turkey (Türkiye Büyük Millet Meclisi).

of the Minister of Justice before prosecutors could initiate proceedings. Neither of these ostensible safeguards has been sufficient for the ECtHR to find the article compatible with the right to the freedom of expression as protected in the European Convention on Human Rights”¹⁰¹.

Provision (4) of the initial version (*Expressions of **thought** intended to criticize shall not constitute a crime*) and provision (3) of the final version (*The expression of an **opinion** for the purpose of criticism does not constitute an offence*) attempt to emphasize freedom of expression but give rise to controversial issues as to which ideas and discourses could be considered *criticism* (not punishable), and which *degrading* (punishable). Intentionally, no explanation is given to this, although it is clear enough that uncovering the truth about the Armenian Genocide should not be considered a punishable crime. However, it is not difficult to guess that the Turkish authorities are inclined to estimate any attempt to unveil the dark corners of Turkish history as degrading the Turkish nation and the government and

¹⁰¹ Cf. *Turkey: Decriminalize Dissent. Time to Deliver on the Right to Freedom of Expression*. (2013) // Amnesty International. London: Amnesty International Publications.

aim to terminate free expression of dissenting opinion, for they tend to satisfy their political interests¹⁰².

As to the linguistic part of the study of the word pair *thought* (in the initial version) and *opinion* (in the final version), it is evident that we again deal with a case of the manipulative choice of the term, namely – *opinion*. Our research reveals that the uncountable noun *thought* is generally explained as:

- *the product of mental activity;*
- *the intellectual activity or the ideas, opinions of a particular place, class or time;*
- *a single act or product of thinking;*
- *the act or process of thinking, mental activity, reflection;*
- *intention, design or purpose;*
- *consideration, attention, care or regard*¹⁰³.

As a countable noun *thought* has only one meaning – *idea or notion*¹⁰⁴.

All the definitions adduced above and the respective synonymous ways of expressing the idea of *thought* – *thinking* (*perceiving, reasoning, contemplating, apprehending, brain-*

¹⁰² Cf. Tamvaki, E. (2009) *A Law and Literature Approach to Oppression of Identity in Turkey*, p. 24.

¹⁰³ Cf. *Word Reference Random House Learner's Dictionary of American English*. (2017).

¹⁰⁴ Cf. *Ibid*.

work, logical process, rationalizing, etc.)¹⁰⁵ are indicative of a result of a mental activity that can be considered more or less fixed, determined, grounded, reasonable and thus objective to a greater extent. Moreover, the etymology of the word shows that the Old English þōht and Middle English thoȝt cognate with the Dutch *gedachte* which is akin to thinking and cognition as rational mental activities¹⁰⁶.

The countable noun *opinion* has many definitions but it is mainly explained as:

- *a belief or judgement based on information that cannot be certain about, that rests on grounds insufficient to produce complete certainty;*
- *a belief or judgement that falls short of absolute conviction, certainty or positive knowledge;*
- *a personal view or belief, attitude or appraisal;*
- *judgement or belief not founded on certainty or proof;*
- *the formal expression of a professional judgement;*
- *the formal statement by a judge or a court of the principles used in reaching a decision in a case;*

¹⁰⁵ Cf. Ibid.

¹⁰⁶ Cf. Ibid.

- *a judgement or estimate of a person or thing with respect to character, merit, etc.;*
- *a favourable estimate* ¹⁰⁷

The first four definitions and the respective synonymous terms to *opinion* (*persuasion, idea, impression and sentiment*) back the approach that *opinion* is based on feeling and emotion rather than reasoning, that it is a point open to question and, consequently, it is more subjective than objective. This is evidently not the case with *thought*.

Thus, it is clear that the semantic choice and preference for the term *opinion* over *thought* may seem to be conditioned by the fact that the lawmakers' efforts aim to present emotional and sentimental expressions of ideas about the Armenian Genocide as subjective, unreasoned criticism and as such not punishable legally.

The analysis of the word-pair *crime* (in the 2005 version) and *offence* (in the 2008 version) shows that the change can most probably be conditioned by the same reason as in the case of the word-pair *thought* and *opinion*, i.e. if an expression of the opinion about the Armenian Genocide is decriminalized, then it

¹⁰⁷ *Word Reference Random House Learner's Dictionary of American English* (2017).

is not a crime and the choice of a semantically and stylistically more neutral term can be thus justified. The analysis of the term *crime* shows that it is *a serious breaking or violation of a public law; an action or an instance of negligence that is deemed injurious to the public welfare or morals or to the interests of the state; an act of serious wrongdoing considered harmful to the public good and legally prohibited*¹⁰⁸. Acts of crime are prohibited, those performing criminal activity and those engaged in it will be punished by law. *Offence* is milder in the sense that it just indicates not very seriously unlawful acts in general but *a violation or breaking of a social or moral rule, transgression, misdemeanour, something that offends or displeases*¹⁰⁹. Therefore, provision (3) in the final version of Article 301, complemented by provision (4), can be interpreted as follows: expressions of personal, sentimental and subjective opinions about the Armenian Genocide intending to criticize it are not considered a crime, and thus are not punishable. In certain cases investigations can be conducted with the permission of the Minister of Justice.

¹⁰⁸ Cf. Ibid.

¹⁰⁹ Cf. Ibid.

With reference to the Armenian Genocide, Armenian scholars tend to believe that the impact of the amendments of Article 301 (2008) will be positive in the sense that more and more Turkish intellectuals will publicly speak about the Genocide. This will create prerequisites for the mentioned historical event, taboo for a long time, to be spoken openly about, thus, in its turn, changing the history of Turkey and demonstrating that Atatürk and the Kemalists have been directly linked to the horrendous events of the Armenian Genocide. As a result, the ethnic and religious groups in Turkey will have more possibilities of free expression¹¹⁰.

This belief sounds quite optimistic though still rather far from reality.

¹¹⁰ Cf. Gabrielyan, H. (2008) *On the Amendments of Turkish Penal Code Article 301* // Noravank Foundation. [in Armenian].

CONCLUSION

The investigation of the legal domain at large and its political implications shows that language is a very important tool in the realization of legal processes aimed at serving the regulation of social behaviour. The performance of legal services should necessarily be based not only on skills for resolving disputable questions and controversies but also professional knowledge to prevent eventual cases. Competence in language use, whether in oral or written speech, plays an indispensable role in these processes. The language (in our case the English language) is characterized by a precise set of linguistic properties applied to this or that type of legal document and bearing witness to the standardization of language use. The appropriate understanding and interpretation of grammatical, lexical, stylistic and graphitic components, in fact, demonstrate the strict and organized nature of the system of legal language. The prevalence of complex, detailed and long sentences with expressions often doubled and tripled by the use of synonyms or semantically close elements is encountered in legal documents. Not infrequently, the use of structure filling lexical units, particularly pronouns and verbs add to the cohesion of the text. The use of the passive voice enhances the idea of the absence of a human agent's influence.

The investigation shows that politics tends to comprehend and interpret law as a means through which to fulfil certain political interests and achieve certain political goals, as in the case of Article 301 of the Turkish Penal Code. This means that the law prevents a political solution to a problem and serves as an obstacle on the way to justice, while politics effectuates the solutions at the expense of law. However, the rule of the independence of law requires that neither law-makers, nor those who apply it, can be guided by the principle of their political preferences when judging opponents. Differentiation of them can by no means be based on the radical opposition of friends vs enemies, for this is sure to lead to strict separation of “ours” and “yours”¹¹¹ in public.

When politics prevails over law, legal documents tend to resort to a manipulation of language in order to meet unjust political needs, to be in the best interests of the dominating group over the interests of the one dominated. Linguistic manipulation does not reveal its viewpoints about the distortion of reality or injustice, and its efficiency depends on concealing the truth. Respectively, the revelation of manipulative linguistic means and tools will eventually help to avoid incorrect interpretation

¹¹¹ Cf. Cerar M. (2009) *The Relationship between Law and Politics* //Annual Survey of International & Comparative Law: Vol. 15, Iss. 1, Article 3.

of legal documents, demagoguery, unjust court decisions and even aggression and violence.

It is beyond suspicion that manipulative tactics have been widely applied to Article 301 of the Turkish Penal Code. As far as the right to freedom of expression is concerned, the changes introduced in the amended version of the article are absolutely inadequate to meet the requirements of the Court's settled case-law. Notwithstanding the skillful efforts of the Turkish judicial branch to interpret Article 301 in favour of the public and society, those changes seem to have only been meant to *throw dust* in the eyes of the European Union and veil the law-makers' actual intention of keeping free human thought in check. The use of unacceptably broad and vague words leaves room for ambiguity and double standards. The strategic enforcement of manipulation of one of the basic human rights in and through language in both versions of Article 301 is quite obvious. As a result of this the provision continues to be a real threat to the exercise of the right to freedom of expression. It is not by chance that the Court of Cassation¹¹² understands those changed elements in exactly the same manner as the latter were interpreted in the 2005 version of the article¹¹³.

¹¹² In Merriam-Webster Dictionary (2017) *court of cassation* is defined as *the highest court of appeal especially in various European countries*.

¹¹³ Cf. ECtHR judgement of 25/10/2012, paragraph 92. Strasbourg.

Interesting is the fact, that among the members of the United Nations, practically no other country finds it appropriate to maintain legislation equivalent to Article 301; does this reveal that the national identity as constructed within the Republic of Turkey is impregnated with unsustainable anomalies? If so, action to extricate such a broad state-sponsored derogation is imperative.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	95
ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՐՈՒՅՆ ՈԼՈՐՏ.....	108
ԼԵԶՎԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՈՒՄ ԵՎ ՄՏԱՇԱՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	135
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 301 ՀՈԴՎԱԾԸ	156
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 301 ՀՈԴՎԱԾԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ (2005 թ. և 2008 թ. անգլերեն տարբերակների զուգադիր քննություն)	168
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	202
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	207

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն աշխատանքի նպատակն է հետազոտել համընդհանուր հսկայական կարևորության, հանրային ոլորտում մեծ կիրառություն գտած իրավագիտական անգլերենի՝ որպես որոշակի թեմատիկ ուղղվածության լեզվի յուրահատկությունները: Ակնհայտ է, որ ցանկացած տեղեկություն գրանցվում, փոխանցվում և հասցեատիրոջ կողմից ընդունվում է լեզվի միջոցով, իսկ այն հանգամանքը, որ իրավունքի լեզուն ներկայումս հայտնվել է արտալեզվական տարբեր գործոնների ազդեցության ներքո, առավել կարևոր է դարձնում այդ լեզվի դերը հատկապես միջազգային հաղորդակցական դաշտում: Ուստի խիստ անհրաժեշտ է, որ իրավական տարբեր դրույթներում ճշգրտությամբ, բայց միաժամանակ ստեղծագործաբար կիրառվեն լեզվական այնպիսի միավորներ և հատկապես բառեր, որոնք արդեն տերմինային արժեք են ձեռք բերել, իսկ դրանց ուսումնասիրությունը իրավագիտական անգլերենի հետագա կիրառության նորանոր հեռանկարներ է բացում:

Գրքում խնդիր է դրվում բացահայտելու և լուսաբանելու անգլերենի այն տարբերակին բնորոշ հատկանիշներ, որն

այժմ միանգամայն հուսալի գործիք է իրավագիտական հաղորդակցության իրականացման ոլորտում: Հայտնի է, որ լեզվական հաղորդակցությունն ըստ էության իրականության փոխանցումն է մի գիտակցությունից մյուսին: Շրջապատող աշխարհը ըմբռնել նախ և առաջ նշանակում է մեծ զգուշավորությամբ ու խնամքով վերաբերվել բառերին և իրականությունն արտացոլելու նրանց ներուժին, քանզի ամեն ինչ ընկալելի է դառնում հենց բառերի օգնությամբ: Լեզվի միջոցով այս կամ այն առարկան կամ երևույթը անվանելով՝ մարդիկ, ըստ էության իրենց մտքի դռներն են բացում այլոց առջև՝ նպատակ ունենալով հաղորդել իրենց գաղափարները և վերարտադրել իրականությունը: Բառերի նկատմամբ այսօրինակ վերաբերմունքն է, որ օգնում է գիտակցելու և համապատասխանաբար արժևորելու իրականությունը: Այդուհանդերձ՝ խոհեր ու խորհրդրդածություններ փոխանցելու՝ լեզվի այս կարևոր հատկությունը հաճախ գործածվում է ի չարս, աղճատվում ու խեղաթյուրվում հանուն ստոր նպատակների և քարոզչության: Ուստի բառերի՝ անազնիվ միտումներով մտաշահարկումը մարդկանց գիտակցությունը վերահսկելու անընդունելի ձև է, ճշմարտությունը աղավաղելու և իրականության փոխարեն կեղծ ու պատիիր արժեքներ քարոզելու խորամանկ քաղաքականու-

թյուն: Ամեննին պատահական չէ, հետևաբար, որ Ջ. Փայփըրը քաղաքական իշխանության չարաշահումը հիմնականում պայմանավորում է խոսքում բառերը հմտորեն շահարկելու գործընթացով, որտեղ այն պարարտ հող է գտնում թաքնվելու ու զարգանալու համար և հնարավորություն ստեղծում ամբողջատիրության՝ բառերում թաքնված թույնի ներուժը աստիճանաբար իրականություն դարձնելու: Մարդու նվաստացումը մեկ այլ մարդու կողմից, որը ֆիզիկական բռնի գործողություններով ուղեկցվող բռնատիրական ու բռնակալական վարքագծի դրսևորում է (համակենտրոնացման ճամբարներ, կտտանքներ, ցեղասպանություններ և այլն), իհարկե, տագնապահարույց իրողություն է, թեև հարկ է ընդունել, որ սկզբնական շրջանում այն մեծ տագնապ չի ծնում, քանզի նուրբ ու անորսալի է այն պահը, երբ բառը զրկում են իր կոչումից ու արժանապատվությունից: Բառի առաջնային ու կարևորագույն արժանիքը իրականության վրա հիմնված հաղորդակցություն իրագործելն է, մի բան, որ հաղորդակցական որևէ այլ միջոց անկարող է իրականացնել¹: Եվ այսպես, հաճախ անազնիվ մղումները, ճշմարտությունն ու իրականությունը հաղորդելու կամ

¹ Sté u Pieper, J. (1992) *Abuse of Language Abuse of Power*. San Francisco: Ignatius Press.

ճշգրիտ ու հասկանալի գաղափարներ ներկայացնելու առաքելությունը փոխարինում են մարդկանց վարքագիծը կառավարելու և որոշակի եսասիրական նպատակների հասնելու մտադրությամբ, որն էլ իրականացվում է քաղաքական և իրավագիտական լեզվի չարաշահման ճանապարհով:

Այսպիսով լեզվի (լեզվական բոլոր տարրերի բազմազանությունը ներառյալ) և իրավունքի համագործակցությամբ կարելի է բացատրել լեզվաբանների և իրավաբանների հետաքրքրությունը իրավագիտական անգլերենի, դրա գործածության յուրահատկության, ինչպես նաև լեզվի կիրառմամբ պայմանավորված՝ մտաշահարկային քաղաքականությունների և խորամանկորեն ձեռք բերված արդյունքների նկատմամբ: Գիտության նշված բնագավառների փոխհատման քննությունը ներկայումս ավելի մեծ կարևորություն է ստանում, քանզի տարբեր երկրների միջև և նույն երկրի ներսում տնտեսական ու մշակութային համագործակցությունը պահանջում է իրավական կարգավորում, իրավաբանների որակյալ օժանդակություն և նրանց մասնակցությունը բանակցություններին, գործարար հանդիպումներին և փաստաթղթերի նախապատրաստմանը: Հետևապես՝ լեզվական գործունեությունը իրավական հարա-

բերությունների ոլորտում առանձնակի կարևորություն է ստանում: Խոսքի այլ գործառական ոճերի նման, որոնք անկախ համակարգեր են, պաշտոնական, այդ թվում՝ իրավական փաստաթղթերի լեզուն ունի հաղորդակցական որոշակի նպատակներ, լեզվական բնութագրական հատկանիշներ, ինչպես նաև իր կայուն կաղապարները: Մրանց քննությունը սույն ուսումնասիրության խնդիրների շարքում է:

Հարկ է նշել, որ լեզվի և իրավունքի հարցերով զբաղվող գիտության ճյուղի մետալեզվական արտահայտությունը «իրավագիտական լեզվաբանություն» է: Գիտական շրջանառության մեջ մտնելով դեռևս անցյալ դարի կեսերին՝ այս տերմինը նշանակում էր լեզվի և իրավական նորմի փոխհարաբերության խնդիրները քննող մեթոդների լրակազմ և հետազոտությունների արդյունք ու միանգամայն բավարարում էր ժամանակակից լեզվաբանության պահանջները²: Միջգիտակարգային հետազոտությունների խթանման ներկայիս համատեքստում իրավագիտական անգլերենի ըմ-

² Ներկայումս լեզուն և իրավագիտությունը կապող կարևոր ոլորտներն են՝ հաղորդակցությունը դատարանում, իրավագիտական դատողությունները, որոնք դիտարկվում են լեզվական հատկանիշների տեսանկյունից, իրավական գործողությունների լեզվաբանական հետազոտությունը, լեզվական գործողությունների իրավական արժեքը, իրավական ձևակերպումների լեզվական պահանջները և այլն:

բռնումը նշանակալիորեն ընդլայնվել է ժամանակակից լեզվաբանության բնագավառում տեղի ունեցող փոփոխությունների շնորհիվ, որոնց արդյունավետությունն ու հուսալիությունը այլևս կասկածից վեր են:

Վերջին տասնամյակների ընթացքում մի շարք գիտնականներ փորձել են սահմանել «իրավունքի լեզուն»³, սակայն այդ հետազոտությունների մեծ մասը համակարգված չի եղել, և իրավական գործընթացներում կիրառվող լեզվի մասին սահմանումները չեն ներառում այն բոլոր հատկանիշներն ու գործառույթները, որոնք հատուկ են այդ ոճին: Որոշ գիտնականներ քննարկում են իրավագիտության լեզվի միայն գրավոր ձևը՝ այն պայմանավորելով երեք ենթատարբերակների առկայությամբ՝ իրավագիտական ուսումնական գրականության լեզու, իրավունքի լեզու և օրենսդրության լեզու⁴: Ընդհանուր առմամբ այս տարանջատումը, իհարկե, միանգամայն ընդունելի է, թեև ակնհայտ է, որ լեզվի այս ենթառճը չի սահմանափակվում միայն խոսքի գրա-

³ St' u Butler, B. D. (2013) *Strategies for Clarity in Legal Writing* //Clarity. Journal of the International Association Promoting Plain Legal Language. Vol. 70, pp. 31-37; Butler, B. D. (2015) *Developing Iinternational EFL/ ESL Scholarly Writers*. De Gruyter Mouton; Bhatia, V. K. (1993) *Analyzing Genre: Language Use in Professional Settings*. London: Longman; Wydick, R.C. (2005) *Plain English for Lawyers*. Durham, NC: Carolina Academic Press և այլն:

⁴ St' u Bhatia, K. L. (2010) *Textbook on Legal Language and Legal Writing*. Universal Law Publishing, p. 46:

վոր ձևով: Ջ. Կուրցոնը, զարգացնելով այս տեսակետը, իրավական յուրահատուկ ընթացակարգերի համար առաջարկում է երկու տերմին՝ պնդելով, որ իրավունքի լեզուն «այն լեզուն կամ ոճն է, որը կիրառվում է փաստաթղթերում օրենք շարադրելիս», իսկ իրավագիտության լեզուն վերաբերում է այն ոճին, որն «օգտագործվում է օրենքի մասին խոսելիս», ընդ որում՝ վերջինս կարող է դրսևորվել թե՛ գրավոր (դատողություններ, դասագրքեր և այլն) և թե՛ բանավոր (պաշտոնական խոսք, վկայի հարցաքննություն և այլն): Իրավագիտության լեզվի բանավոր ձևը կարելի է անվանել նաև օրենքի լեզու⁵: Ինչևէ, մի բան ակնհայտորեն պարզ է թվում. իրավագիտության լեզուն ընդհանրապես (գրավոր թե՛ բանավոր) և իրավագիտական անգլերենը մասնավորապես կառավարվում են որոշակի տերմինների և ընդհանուր գիտական բառակապակցությունների կիրառությամբ, որոնք, որպես այդպիսիք, կրում են այս կամ այն փաստաթղթի, այս կամ այն գրույցի իրավագիտական բուն տեղեկատվությունը:

⁵ Sté u Kurzon, D. (1989) *Language of the Law and Legal Language* // Special Language: From Humans Thinking to Thinking Machines. / Eds. C. Lauren and N. Marianne. Clevedon-Philadelphia: Multilingual Matters, p. 284:

Իրավագիտական դիսկուրսում լեզվական միջոցների որոշակի ընտրությունը հաճախ կարող է հատուկ նպատակաուղղված լինել իրագործելու իրականության աղավաղում, երկիմաստ և աղոտ մտքերի ձևակերպում, փաստերի քողարկում: Այս դեպքում մենք կարող ենք պնդել, որ լեզվական մտաշահարկումը կիրառվում է մտաշահարկողի իրավական և քաղաքական նպատակները իրագործելու համար: Մտաշահարկային նպատակով ընտրված լեզվական տարբեր տարբեր կարող են պայմանական թվալ, և այստեղ է, որ մտաշահարկային լեզվի քննությունն ու մեկնությունը կարևոր են ճշմարտությունը բացահայտելու առումով:

Այս աշխատանքում մենք նպատակ ունենք նաև վեր հանելու Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածի երկու՝ 2005 թ. և 2008 թ. տարբերակներում միտումնավոր կիրառված մտաշահարկային մարտավարությունը, փաստական նյութի քննությամբ բացահայտելու, որ օրենքի՝ հստակ, ճշգրիտ ու հասկանալի գաղափարներ արտահայտելու հիմնարար գործառույթներն այս փաստաթղթերում կոպտորեն խախտված են, քանզի դրանք մարդկանց կառավարելու,

նրանց ընկալումն ու մեկնությունը ուղղորդելու և առարկայական արդյունքներ ստանալու նպատակ են հետապնդում:

Երկիմաստ, անորոշ բառերի գործածությունը Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածի առաջին տարբերակի բնորոշ հատկանիշներն են, որոնք վերաբերում են թուրքականությունը, Հանրապետությունը կամ Թուրքիայի ազգային մեջլիսը անարգելուն⁶, և հենց այդ էր պատճառը, որ թուրքական իշխանություններին պարտադրեցին շտկումներ անել փաստաթղթի երկրորդ տարբերակի ձևակերպումներում⁷:

Եվ այսպես, մեր հետազոտության օրակարգում է հարցի ուսումնասիրությունը լեզվաբանական, իրավագիտական, քաղաքական տեսանկյունից դիտարկումների փոխհատման տիրույթում: Նպատակ ունենք ուշադրության կենտրոնում պահելու իրավական այդ երկու փաստաթղթերում լեզվական միավորների կիրառման յուրահատկությունները և

⁶ Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածի այս տարբերակն ընդունվել է 2005 թ. հունիսի 1-ին: Տե՛ս Leicht, J. (2006) *Turkey: Court Drops Prosecution of Writer Orhan Pamuk* //World Socialist web site. ICFI. Archived from the original on 25 July 2008:

⁷ Երկրորդ տարբերակն ընդունվեց 2008 թ. ապրիլի 30-ին: Տե՛ս Algan, B. (2008) *The Brand New Version of Article 301 of Turkish Penal Code and the Future of Freedom of Expression Cases in Turkey* // German Law Journal, Vol. 9, N 12:

տեսական ու գործնական մեկնաբանություններով հիմնավորելու լեզվի շահարկման աղաղակող փաստերը: Փորձ կարվի նաև անդրադարձ կատարելու նշված փաստաթղթերի իրավագիտական հայեցակերպին:

Սույն հետազոտության համար չափազանց կարևոր է նախադասությունների՝ ճշմարտության նախադրույթ և հաջողության նախադրույթ⁸ ունենալու պոտենցիալ կարողության բացահայտումը իմաստաբանական մեթոդաբանության հաշվառումով: Ճշմարտության նախադրյալները առնչվում են այն փաստին, որ ասույթը հասկանալու համար հասցեագրողը և հասցեատերը պետք է քաջ գիտակցեն, թե ճշմարտացիություն պարունակող ասույթի դեպքում ինչպիսին պետք է լիներ իրականությունը: Ասույթում արտահայտվող ճշմարտությունը մեծապես կախված է դրանում կիրառված բառերի իմաստներից, մինչդեռ հաջողության նախադրյալները պայմանավորված են դիսկուրսային իրադրությամբ, երբ մի որոշակի լեզվական տարր ներառվում է ասույթի մեջ և միանգամայն ընդունելի համարվում: Այս դեպքում իմաստի հաղորդման գործընթացը

⁸ Տե՛ս Bogal-Allbritten, E. (2013) *Semantic Research Methodology*. Based on Matthewson 2004, p. 3:

կարգավորվում է ճշմարտության նախադրույթներով, բայց միննույն ժամանակ մեծապես կախված է երկիմաստ բառերի միտումնավոր ընտրությունից, որոնք մոլորեցնող նախադասություններ և շինծու տրամաբանություն են ձևավորում: Այսպիսի նախադասություններում հաճախ առկա են ճշմարտության և հաջողության երկու կամ նույնիսկ ավելի նախադրույթներ:

Աշխատանքում փաստական նյութը քննարկվում է նաև դիսկուրսի քննադատական վերլուծության դիրքերից, որն ըստ էության դիսկուրսի քննության միջգիտակարգային մոտեցում է: Այս դեպքում լեզուն դիտարկվում է որպես հասարակական գործառնություն, և փորձ է արվում դիսկուրսի կառուցվածքը բացատրել՝ հաշվի առնելով հասարակական փոխներգործությունների և հանրույթի կառուցվածքի յուրահատկությունները: Ըստ դիսկուրսի քննադատական վերլուծության մեջ հաստատված ավանդույթի՝ դիսկուրսի լեզվական և ոչ լեզվական գործառնությունները դիտարկվում են որպես այդ միավորի բաղկացուցիչ տարրեր: Այս մեթոդի կիրառությունը հնարավորություն է տալիս հետազոտելու, թե ինչպես են հաստատվում իշխանական հարաբերու-

թյունները և լեզվի միջոցով ամրակայվում հասարակական գիտակցության մեջ⁹:

Իրավագիտական դիսկուրսում լեզվի շահարկված կիրառությունը ուղղակիորեն կապված է հասարակական միջավայրի հետ: Ուստի տվյալ դեպքում անհրաժեշտ է մտաշահարկումը դիտել ոչ միայն որպես իրավական, այլև հասարակական-քաղաքական երևույթ, որը դրսևորվում է դրա՝ լեզվի հետ ունեցած փոխհարաբերության միջոցով: Այլ կերպ՝ իրավական մտաշահարկումը պետք է քննարկվի և վերլուծվի որպես հասարակական-քաղաքական գերակայության հասնելու ճանապարհ, փաստերի խեղաթյուրման միջոցով իշխանությունը պահելու գործիք, որի բացահայտումը մեծապես կախված է հասարակության որոշակի խավերի՝ ճշմարտությունը վեր հանելուն ուղղված պայքարի հետևողականությունից: Մեր լեզվաբանական վերլուծությունը միտված է ակնհայտ դարձնելու, որ իրավունքի լեզուն կարող է օգտագործվել որպես քաղաքական նկրտում-

⁹ Stéu Fairclough, N. (1995) *Critical Discourse Analysis: the Critical Study of Language*. Harlow: Longman; Wodak, R. (2001) *What CDA is about // Methods of Critical Discourse Analysis.* / Eds. R. Wodak, M. Meyer. London: Sage; Stéu և van Dijk, T. A. (2001) *Critical Discourse Analysis // The Handbook of Discourse Analysis.* /Eds D. Schiffrin, D. Tannen, H. E. Hamilton. Massachusetts, Malden: Blackwell Publishing, pp. 352 – 371:

ների իրականացման մեխանիզմ՝ լեզվական կեղծիքի և ստի կիրառմամբ:

Ավելացնենք, որ տարբեր հետաքրքրություններ բավարարելու նկատառումով հետազոտության ընթացքում հեղինակները փորձել են հնարավորինս մատչելի բացատրել լեզվաբանական և իրավագիտական բոլոր էական նեղմասնագիտական հասկացությունները՝ ջանալով այս հետազոտությունը հասանելի դարձնել լայն լսարանին, ներառյալ լեզվի մասնագետներին և իրավաբան գիտնականներին, որոնք հետաքրքրվում են իրավագիտության և լեզվաբանության փոխհատման հարցերով, հասարակագետ քաղաքագետներին, ուսանողներին և այլ ոլորտի մարդկանց: Աշխատանքը օգտակար կլինի նաև նրանց համար, ովքեր առաջին անգամ են առնչվում միջգիտակարգային այս ոլորտին, և ընթերցողական լայն զանգվածին, որը հետաքրքրված է ավելին իմանալու լեզվի և իրավունքի սերտ կապի ու փոխգործակցության և իրավական փաստաթղթերում լեզվի մտաշահարկային կիրառությունների մասին:

ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԳԼԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՒՐՈՒՅՆ ՈԼՈՐՏ

Գրքի այս մասում մեր նպատակն է ընթերցողի ուշադրությունը հրավիրել ՄԱԿ-ի՝ Ցեղասպանության կոնվենցիայի անգլերեն տարբերակին՝ որպես մասնագիտական որոշակի ուղղվածության տեքստի իրավագիտական անգլերենին բնորոշ լեզվաոճական առանձնահատկությունների վրա՝ առանձին դեպքերում գուգահեռներ անցկացնելով բնօրինակի և դրա հայերեն թարգմանության միջև¹⁰:

Իրավունքի լեզուն համարվում է պաշտոնական ենթա-ոճերից մեկը, որը լեզվի գործառության այլ ոճերի նման ունի հաղորդակցական որոշակի նպատակ և լեզվական ու ոճական փոխկապակցված միջոցների իր համակարգը: Իրավագիտության ոլորտում կիրառվող լեզվի ոճական հիմնական հատկանիշը ճշգրտությունն է, որը չի հանդուրժում որևէ անստուգություն, անորոշություն կամ երկիմաստություն: Էապես կարևորվում են նաև տեքստում հնա-

¹⁰ Այս հարցի նախնական քննությունը տե՛ս Gasparian S., Kharatyan L. *Legal English. The UN Convention on Genocide as a Domain-Specific Text* // Armenian Folia Anglistika. International Journal of English Studies. 1-2 (18), 2018, pp. 72-85.

րավորինս փոքրաթիվ լեզվական միջոցների գործածությունը, լեզվական կանոնարկված ձևերի կիրառությունը, որը պայմանավորված է միտքը բանաձևային կադասարների օգնությամբ միատեսակ արտահայտելու ձգտումով և փաստաթղթային տեքստերի առանձին մասերը հաճախակի կրկնելով: Պաշտոնական իրավական փաստաթղթեր կազմելիս ոչ պակաս ուշադրություն են պահանջում նաև բովանդակության ձևավորման, տեքստի տարբեր հատվածների համապատասխան դասավորության, պարբերությունների տարանջատման, տառատեսակի ընտրության և այսօրինակ այլ հարցեր¹¹: Իրավական փաստաթղթերին ներկայացվող պահանջներից առաջնային են տեքստի ամբողջականությունն ու ավարտունությունը, տեղեկատվության մատուցման տրամաբանական հաջորդականությունը և ձևակերպումների հակիրճությունը: Շարադրանքի չեզոք տոնը պաշտոնական ոճի նորմերից է, ուստի իրավագիտական ուղղվածությամբ խոսքում շատ հազվադեպ է հուզական տարբեր պարունակող լեզվական միավորների (սուբյեկտիվ գնահատում արտահայտող ածանցավոր գոյականների, գնահատողական ածականների և այլն) կիրառու-

¹¹ СЕ' u Galperin I.R. (1981) *Stylistics*. Moscow: Vysshaya Shkola, p. 68:

թյունը: Անընդունելի է նաև խոսակցական, բարբառային, տարածքային-խոսվածքային ձևերի և դարձվածային միավորների օգտագործումը: Իրավագիտական անգլերենին վերաբերող գրականության մեջ միանգամայն հստակ է նշվում այն միտքը, որ անգլերենի մասնագիտական այս տարբերակը բազմաթիվ ձևերով տարբերվում է սովորական խոսքից, և դա գլխավորապես արտահայտվում է մասնագիտական տերմինների, բայի անդամ և կրավորական կառույցներով կազմված բարդ ու ծավալուն նախադասությունների, բայի կրկնակի ժխտական ձևերի առատ կիրառությամբ և այլն¹²: Բառանյութի գործածության տեսանկյունից իրավագիտական դիսկուրսը աչքի է ընկնում պաշտոնական բառապաշարի, օտարաբանությունների, ինչպես նաև բառամիավորների գոյականաբար կիրառություններով: Ու թեև շարադրանքի հնարավոր հակիրճությունը այսօրինակ դիսկուրսներին ներկայացվող պահանջ է, այդուհանդերձ իրավագիտական դիսկուրսում չի հաջողվում

¹² Ա. Թրոսբորգը իրավունքի լեզուն սահմանում է որպես ՀՆԼ (Հատուկ նպատակների լեզու): Տե՛ս Trosborg A. (1995) *Special Issue on Laying down the Law: Discourse Analysis of Legal Institutions* // Journal of Pragmatics, 23 (1), pp. 1-5. Տե՛ս նաև Groot de, G. R. (1998) *Language and Law* // Netherlands Reports to the Fifteenth International Congress of Comparative Law. /Ed E. H. Hondius, Bristol, pp. 21-32; Gibbons, J. (2003) *Forensic Linguistics: An Introduction to Language in the Justice System*. Oxford: Blackwell, և այլն:

խուսափել բառաշատությունից, մի բան, որ միանգամայն բնորոշ է հասարակական գիտությունների գրեթե բոլոր բնագավառներին: Հետազոտությունները վաղուց են հաստատել, որ անգլերեն իրավագիտական դիսկուրսի ճշգրտությունն ու հստակությունն ապահովող միջոցներից է նաև բառամիավորների, այդ թվում նաև տերմինների կիրառությունը հստակ սահմանված իմաստով, ինչպես նաև երկիմաստությունը բացառող քերականական կառույցներով, քանի որ անճիշտ ու անհամապատասխան միավորների ներմուծումը կարող է բերել անորոշության՝ խոչընդոտելով օրենսդրական հաղորդակցական միջավայրն ու իրադրությունը ճիշտ հասկանալու գործընթացը: Իրավագիտական անգլերենի մեկ այլ կարևոր հատկանիշ է լեզվի՝ վերն արդեն հիշատակված չեզոքությունը, որով բացառվում է հուզական ճնշում գործադրելու կամ իրավական սուբյեկտիվ գնահատողականությունն արտահայտելու հնարավորությունը: Նորակազմությունների չարդարացված գործածությունը չի կարող տեղ գտնել անգլերենի իրավագիտական կիրառություններում, քանի որ դա կխաթարի լեզվի համակարգված բնույթը, որը կոչված է պահպանելու իրավագի-

տության ոլորտին առնչվող հասկացույթների համակարգը¹³:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ անզլերենի պատմությունը իրավագիտական անզլերենի և այդ ոլորտի տերմինաբանության ուղենիշն է: Եվ իրոք, դա պատմություն է անզլուսաքսոն վարձկան զինվորների, լատինախոս միսիոներների, սկանդինավյան ասպատակողների և նորմանացի ներխուժողների մասին, որոնք բոլորն էլ որոշակի հետք են թողել այդ երկրի ոչ միայն լեզվի, այլև օրենքների վրա: Հետևաբար՝ բոլորովին պատահական չէ, որ ժամանակակից իրավագիտական անզլերենը մեծ չափով պարտական է լատիներենին և ֆրանսերենին: Անզլերենի զարգացման տարբեր փուլերում տեղի են ունեցել բառաձևերի կամ բառիմաստների որոշակի փոփոխություններ, իսկ որոշ բառեր դեռ պահպանում են իրենց սկզբնական իմաստները: Օրինակ, այնպիսի տերմիններ, ինչպիսիք են *inflict* – լատիներեն *inflictus* (15-րդ դ.), *conspiracy* – լատի-

¹³ Տե՛ս Berman, H. J. and Greiner, W. R. (2001) *The Nature and Functions of Law*. Fifth Edition. N.Y.: Foundation Press; Tiersma, P. M. (1999) *Legal Language*. Chicago: University of Chicago Press; Sahakyan, L. (2012) *The Problem of Metaphoric Displacement in the Process of Term Formation (with special reference to English legal terms)*. PhD Synopsis. Yerevan: YSU (in Armenian), etc.:

ներեն *conspirationem*, հին ֆրանսերեն *conspiracie* (14-րդ դ. կեսեր), *incitement* – լատիներեն *incitamentum* (վաղ 15-րդ դ.), *tribunal* – ուղղակի լատիներենից, *tribunal* (վաղ 15-րդ դ.), *treaty* – լատիներեն *tractatus*, հին ֆրանսերեն *traitié*, անգլոֆրանսերեն *treté* (ուշ 14-րդ դ.), *suppress* – լատիներեն *suppressus* (ուշ 14-րդ դ.), *deposit* – լատիներեն *depositum*, որը բխում է *deponere* –ից (վաղ 17-րդ դ.) և այլն, դեռևս ամենօրյա գործածություն ունեն իրավագիտական անգլերենում: Սակայն դրանցից շատերն այսօր գործնականում տվյալ ոլորտից դուրս այլևս չեն կիրառվում երբեմն այն պատճառով, որ դրանք պահպանում են իրենց ծագումնաբանական իմաստները:

Այսպես, Ցեղասպանության կոնվենցիայի հոդված XIV-ում հանդիպում ենք ֆրանսերեն *procès-verbal* արտահայտությանը, որը այդ տեքստում պահպանվել է առանց որևէ փոփոխության կամ մեկնաբանության, մինչդեռ հայերեն տարբերակում որպես համարժեք տրվում է պաշտոնապես կիրառվող «*արձանագրություն*»-ը: Ուրիշ խոսքով՝ մեծաթիվ փոխառությունների շնորհիվ՝ իրավագիտական անգլերենը ձեռք է բերել մի շարք տիպական գծեր: Սակայն բացի ֆրանսերենից փոխառված տերմիններից, այն պահպանել է

նան իրավագիտական ֆրանսերենի մի քանի այլ հատկանիշներ ևս, ինչպես օրինակ՝ որոշիչ-որոշյալ կառույցի շրջուն շարադասությունը, ինչը լայն տարածում ունի իրավունքի լեզվում, թեև Կոնվենցիայի տեքստում նման շարադասությունը սահմանափակվում է սոսկ մի եզակի կիրառությամբ՝ *Secretary General (Գլխավոր քարտուղար)*: Անմիջապես կարելի է նկատել, որ Կոնվենցիայի հայերեն թարգմանությունը ապավինում է հայերենի շարադասության դասական կիրառությանը:

Օտար փոխառությունների առնչությամբ հարկ է նաև նշել, որ փոխառյալ բառերը ոչ միայն համալրել ու հարստացրել են իրավագիտական անգլերենի տերմինաբանությունը, այլև բավականին բարդացրել և իր տեսակի մեջ եզակի դարձրել այն: Այս գործընթացի վրա ազդող կարևորագույն գործոններից է միևնույն իրավագիտական հասկացությանը վերաբերող հոմանիշների կիրառությունը: Կոնվենցիայի տեքստը նույնպես բացառություն չէ այս առումով: Այսպես օրինակ՝ *provision, paragraph, article (հոդված), confirm, ratify (հաստատել)* և այլն: Ու թեև այս բառերը բաձարձակ հոմանիշներ չեն, քանի որ, լեզվում այդպիսիք ընդհանրապես գոյություն չունեն, դրանք նշանակությամբ իրար շատ մոտ

են և սուկ տարբերվում են իմաստառձական որոշ երանգներով: Այսպես՝ *article* (*հոդված*) բառը որպես իրավագիտական տերմին կիրառվելիս նշանակում է «*համաձայնագրի կամ պայմանագրի մեջ առանձին կետ, հոդված կամ օրակարգային հարց*»¹⁴, մինչդեռ *paragraph* (*հատված, պարբերություն*) տերմինը նշանակում է «*գրավոր տեքստի հատված, որը սովորաբար կազմված է մեկ թեմայի առնչվող մի քանի նախադասություններից*»¹⁵: *Paragraphing*-ը (*պարբերությունների բաժանում*) տեքստը (ներառյալ օրենսդրականը) դասավորելու միջոց է: Դա արվում է նախադասությունը շարահյուսական միավորների բաժանելու և դրանք որպես տեքստի առանձին հատվածներ դասավորելու միջոցով: *Provision* (*պայմանագրի կետ, մաս*) տերմինով բնորոշվում է «*իրավական փաստաթղթի որևէ պայման կամ համաձայնություն*»¹⁶:

Confirm (*հաստատել*) և *ratify* (*վավերացնել*) տերմինների ուսումնասիրությամբ պարզվում է, որ բառարանում զետեղված *confirm* բառի սահմանումը բավականին ընդգրկուն է. «*ավելի որոշակի կամ պաշտոնական դարձնել*

¹⁴ Տե՛ս *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. (2005) Oxford: OUP, p. 72:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 1099:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 1215:

որն է պաշտոն, համաձայնագիր և այլն, ինչ-որ բան ամրակայել»¹⁷: Մինչդեռ *ratify* բառը բուն իրավագիտական տերմին է, որը նշանակում է «պայմանագիրը պաշտոնապես օրինականացնել՝ դրա օգտին քվեարկելով կամ ստորագրելով այն»¹⁸: Այսպիսով նշված բառային միավորները իրավագիտական անգլերենի ոլորտում իմաստային առումով սերտորեն փոխկապակցված են: Ինչպես վերը նշվել է, հոմանշային լեզվական միավորներ կիրառելու այս հնարավորությունը կարելի է բացատրել այն փաստով, որ միևնույն հասկացությունը կարող է մեկից ավելի բառերով արտահայտվել, հաճախ՝ տվյալ լեզվի սեփական և օտար լեզվից փոխառված հոմանշային բառային միավորներով: Հոմանշային գույգերի ամենասովորական տիպերը՝ կրկնակները, որոնք կազմված են երկու բառային միավորներից, հանդիպում են նաև Կոնվենցիայի տեքստում: Այդպիսի օրինակ է *application or fulfillment (կիրառում կամ կատարում)* երկանդամ գոյականի կիրառությունը:

Այսուհանդերձ, շտապենք հավելել, որ հականիշ գույգերի կիրառությունը նույնպես խորթ չէ իրավագիտական անգլերենին: Կոնվենցիայի տեքստում, օրինակ, ակնհայտ են

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 318:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 1251:

հականշային գույգերի ազդեցությունը և երկիմաստությունից ու թյուրըմբռնումից խուսափելու՝ դրանց կիրառությամբ ընձեռված հնարավորությունը: Այսպես՝ *public officials or private individuals (պաշտոնատար կամ մասնավոր անձինք)*; *in whole or in part (լրիվ կամ մասնակի)*, *in time of peace or in time of war (խաղաղ թե պատերազմական պայմաններում)*:

Իրավագիտական տեքստերի քննությունը ցույց է տալիս, որ դրանցում հաճախ են կիրառվում պաշտոնական բառեր-հնարանություններ, որոնք հազվադեպ են հանդիպում առօրյա հաղորդակցության մեջ: Օգտագործվելով ավելի պակաս հաճախականությամբ, քան մյուս տերմինները՝ դրանք ժամանակի ընթացքում հանրության մեծ մասի ընկալման համար խրթին են դառնում և օտարանում: Օրինակ, Կոնվենցիայի շարադրանքում հանդիպում են այնպիսի հնարանություններ, ինչպիսիք են *hereinafter (ներքոհիշյալ)*, *thereof (որի)*, *thereafter (-)*: Կարելի է նկատել, որ բնագրում տեղ գտած *thereafter* հնարանությունը լիովին անտեսվել է հայերեն թարգմանության մեջ: Բառարանների վկայությամբ¹⁹ այն կարող էր թարգմանվել որպես «*սրանից հետո, այդ*

¹⁹ Տե՛ս Kouyoumdjian, M. (1981) *A Comprehensive Dictionary: English-Armenian*. Beirut-Lebanon: D. Doniguan & Fils, p. 1272:

պահից ի վեր, ըստ այդմ»: Նկատելի է նաև, որ եթե որոշ անգլերեն հասկացություններ հնացած և գրքային են, դրանց հայերեն համարժեքները (*ներքնհիշյալ, որի* և այլն) առավել կամ պակաս հաճախակի կիրառվում են նաև դիսկուրսի այլ տարատեսակներում: Կոնվենցիայի հայերեն թարգմանության մեջ դիտարկվել է նաև հակառակ գործընթացը: Անգլերենում առօրյա կիրառություն ունեցող միավորները հայերեն թարգմանվում են հնացած բառերով՝ (*present – սույն, to depose – պահ տալ* և այլն): Թեև այս բառաձևերի կիրառման նպատակը միտքը ավելի մանրամասն, հանգամանալից, խորը և արտահայտիչ մատուցելն է, սակայն դրանք հաճախ բարդացնում են հասկացման գործընթացը և վերածվում անհարկի հավելումների: Չնայած դրան՝ բառերի այսօրինակ կիրառման միտումը շարունակում է պահպանվել:

Այս տերմիններին զուգահեռ՝ իրավաբաններն օգտագործում են պակաս պաշտոնական բառեր, բառակապակցություններ և նույնիսկ դարձվածներ կամ, այլ կերպ՝ ժարգոնային, նեղմասնագիտական բառեր, որոնք, թվում է, հեշտացնում են հաղորդակցումը, սակայն իրականում կարող են դժվարըմբռնելի լինել ոչ մասնագետների համար: Որ-

պէս ծածկալէզու (argot) որակվող մասնագիտական այս բառապաշարը սլենգային միավորների նման, ստեղծվում և շրջանառության մեջ է դրվում հենց իրավաբանների կողմից՝ ըստ նպատակահարմարության: Տերմինների և բուն տերմինային արտահայտությունների առկայությունը շեշտադրում է իրավագիտական անգլերենի պաշտոնականությունը և խոսքին իմաստային առանձնահատուկ ճշգրտություն է հաղորդում²⁰:

Իրավագիտական անգլերենի մեկ այլ բնորոշ գիծը, այսպէս կոչված, սովորական բառերի կիրառումն է անսովոր իմաստներով: Այդպիսի լեզվական միավորների՝ իրենց առաջնային բառարանային իմաստով կիրառությունը նպատակ է հետապնդում խուսափելու հնարավոր թյուրըմբռնումներից, երկիմաստություններից կամ անհարկի զգացմունքայնությունից: Հնչունական միևնույն կառուցվածքն ունեցող բառերի տարիմաստ կիրառումը ոչ իրավագիտական և իրավագիտական տեքստերում ցույց է տալիս բառի՝ տարբեր հասկացություններ արտահայտելու ներքին հնարավորությունները: Օրինակ, եթե *provision* բառը ֆինանսական ոլորտում կիրառվում է «կազմակերպության

²⁰ Տե՛ս Mellinkoff, D. (1963) *The Language of the Law*. Little: Brown, p. 17:

եկամուտից ստացված որոշ քանակի գումար՝ կուտակված դրա հաշվեհամարի վրա՝ որպես ֆինանսական պարտավորություն, հատկապես անհուսալի դեբիտորական պարտքի կամ ֆինանսական ակտիվի արժեքի նվազում» նշանակություններով, իսկ կրոնական բնույթի տեքստում այն նշանակում է «վճարովի քահանայական պաշտոնի նշանակում հատկապես Պապի կողմից, երբ այդ պաշտոնը դեռևս թափուր չէ»²¹, ապա Կոնվենցիայի համատեքստում այդ բառը ստանում է հետևյալ տերմինաբանական նշանակությունը՝ «հրավական փաստաթղթի պայման կամ պահանջ»²² և թարգմանվում է հայերեն որպես «կետ, մաս»:

Նույն դիտանկյունով *instrument* (փաստաթուղթ, վավերագիր) տերմինի քննությամբ վեր է հանվում դրա հիմնական իմաստը՝ «գործիք կամ սարք, որն օգտագործվում է մի որոշակի առաջադրանք, հատկապես նուրբ (վիրաբուժական, օպտիկական, և այլն) կամ առանձնակի ճշտագրություն պահանջող գիտական աշխատանք կատարելու համար»: Արվեստի ոլորտում այս տերմինը սովորաբար վերա-

²¹ Տե՛ս *Word Reference Random House Unabridged Dictionary of American English* (2019):

²² Տե՛ս Hornby A. S. (2005) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP, p. 1215:

գրվում է «սարքի, որը նախագծված է մարդուն երաժշտական հնչյուններ արձակելու հնարավորություն տալու նպատակով» (FDF): Սակայն իրավագիտական համատեքստում այն լրացուցիչ իմաստ է ձեռք բերում և մատնանշում է «պաշտոնական կամ իրավական փաստաթուղթ»²³(FDF):

Ցեղասպանության Կոնվենցիայի համատեքստում *resolution, law, ratification, provision, jurisdiction, legislation, punishment, crime, aim, humanity, co-operation, peace, war, conspiracy, prevention, suppression, accession, revision* բառային միավորների քննությունը բացահայտում է տերմինաբանական ընդհանրացման և վերացարկման շատ բարձր աստիճան: Նման անվանակարգային միավորների կիրառության նպատակն է շեշտադրել տվյալ համատեքստի հիմնական հասկացությունները: Մյուս կողմից, դրանց առկայությունը իրավական փաստաթղթերում և մասնավորապես Կոնվենցիայի տեքստում մատնանշում է գոյականացման միտում, որը նախընտրելի է այսպիսի փաստաթղթերում: Դրանք տեքստ են ներմուծում որոշակի և բավականին ճշգրիտ նշանակություն, ուստի և անհնար է այդ անվանակարգային միավորները փոխարինել բայերով:

²³ Տե՛ս *Free Dictionary of Farlex*.

Այսպես, օրինակ, *give effect to the provision of the present Convention; consider appropriate for the prevention and suppression of acts; the declaration made by the General Assembly of the United Nations in its resolution; direct and public incitement to commit genocide; relating to the interpretation, application or fulfillment of the present Convention* և այլն:

Իրավագիտական անզլերենի ձևաբանությանն առնչվող յուրահատկությունների քննությամբ երևան են գալիս քերականական ինքնատիպ կառույցներ, որոնց շարքում առավել հաճախակի կիրառվողներից են բայի կրավորական սեռով կազմված կառույցները՝ միտված ստեղծելու անկողմնակալության ցանկալի տպավորություն և ընդգծելու ոչ թե գործողություն կատարողին, այլ գործողությունը: Կոնվենցիայի տեքստում ակնհայտ նպատակ է դրված պահպանելու օբյեկտիվության սկզբունքը այնքանով, որքանով դա վերաբերում է ներկայացված նյութին, և շեշտելու հիմնական գործողությունը իրականացնելու կարևորությունը: Այսպես օրինակ՝

- *The present Convention shall be ratified, and the instruments of ratification shall be deposited with the Secretary-General of the United Nations.*

- *Genocide and the other acts enumerated in article III shall not be considered as political crimes for the purpose of extradition.*
- *The present Convention may be acceded to on behalf of any Member of the United Nations.*

Նույնիսկ այն եզակի դեպքերում, երբ նշվում է գործողություն կատարողը, նախապատվությունը, այնուամենայնիվ, տրվում է գործողությանը: Բերված հետևյալ օրինակները լուսաբանում են այս միտքը.

- *Persons charged with genocide or any of the other acts enumerated in article III shall be tried by a competent tribunal of the State in the territory of which the act was committed.*
- *An invitation to sign has been addressed by the General Assembly.*
- *A request for the revision of the present Convention may be made at any time by any Contracting Party.*

Եղանակավորող բայերի (մասնավորապես *shall* և *may*) կիրառության բարձր հաճախականությունը նույնպես բնորոշ է իրավագիտական տեքստերին: Եղանակավորող բայերը, նշելով, թե արդյոք գործողությունը հնարավոր է կամ անհնար, պարտադիր է կամ հանձնարարելի, կիրառվում են այնպիսի էթիկական հասկացությունների հետ կապված, ինչպիսիք են պարտավորությունն ու թույլատրելիությունը: *May* եղանակավորող բայը, օրինակ, Կոնվենցիայի անգլերեն տեքստում արտահայտում է թույլտվություն և լիազորություն, որը հայերեն տարբերակում թարգմանվել է *կարող է* կամ *պետք է*.

- *Any Contracting Party may call upon the competent organs of the United Nations.*

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին:

Shall եղանակավորող բայի ոճավորված կիրառությունը իրավունքի լեզվում վեր է հանում դրա կարևորագույն գործառույթը իրավական փաստաթղթերում, որն է՝ օրենքներ,

հրահանգներ, հրամաններ, վճիռներ հաստատելը: Ըստ Webster's New World Dictionary բառարանի՝ պաշտոնական ոճում կիրառվելիս *shall* եղանակավորող բայն արտահայտում է աներկբա պարտավորություն, մինչդեռ հայերենում եղանակավորության այս իմաստը առկայանում է գլխավորապես բայի ներկա ժամանակաձևով.

- *Persons charged with genocide ... shall be tried by a competent tribunal of the State.*

Այն անձինք, որոնք մեղադրվում են ցեղասպանություն կատարելու մեջ, դատվում են երկրի իրավասու դատարանի կողմից:

- *Acts enumerated in article III shall not be considered as political crimes.*

Մյուս արարքները հանձնման նպատակների համար չեն դիտվում որպես քաղաքական հանցագործություններ:

Հայերեն թարգմանության զուգադիր քննությամբ պարզվում է, որ բովանդակության առումով *shall* եղանակավորող բայն ավելի ընդգրկուն է, քանզի այն ցույց չի տալիս կոնկրետ հրաման, պարտավորություն, սպառնալիք, նա-

խազգուշացում և խոստում: Օգտագործվելով այլ իմաստա-
յին համատեքստերում և ընդհուպ մոտենալով *may* եղա-
նակավորող բային՝ *shall*-ը բացառում է դաժանությունը և
արտահայտում է թույլտվություն, ինչ-որ գործողություն ի
կատար ածելու հավանականություն՝ պայմանավորված մի
շարք հանգամանքներով:

Իրավական փաստաթղթերը յուրահատուկ են նաև
իրենց գրաֆիկական ձևավորման առումով: Դ. Քրիսթլն ու
Դ. Դեյվին մատնանշում են դրանց ավանդաբար բնորոշ
երկարաշունչ տեքստահատվածների ամբողջականությու-
նը. երկար տողերը ընդունված էր ձգել լուսանցքից լու-
սանցք, և չկային բացատների կամ պարբերությունների
սահմանները նշող ներսի տողագլուխների կաղապարներ:
Օրենքի նախագիծ կազմողների համար միայն մեկ նախա-
դասությամբ փաստաթուղթ կազմելը սովորական երևույթ
էր²⁴: Սակայն հաղորդվող տեղեկատվության պարզությունն
ու ճշգրտությունը պահպանելու նպատակով իրավա-
բանական շարադրանքում այսօր մեծ կարևորություն է
տրվում տեքստի կառուցվածքին և շարվածքին:

²⁴ Տե՛ս Crystal, D. and Davy, D. (1969) *Investigating English Style*. NY: Longman,
p. 194:

Եթե փորձենք ուսումնասիրել Յեղասպանության կոնվենցիայի տեքստը վերը նշված տեսանկյուններից, ապա կբացահայտենք հետաքրքիր պատկեր: Տեքստը սկսվում է փաստաթղթի մասին նախնական տեղեկատվություն հաղորդող, դրա կառուցվածքը և նպատակները ներկայացնող կարճ նախաբանով: Պետք է նշել, որ դա ընդհանուր առմամբ կոնվենցիաներին, հռչակագրերին և այլ պայմանագրերին ու դաշնագրերին բնորոշ կառուցվածքային հատկանիշ է: Կոնվենցիայի հոդվածները հաջորդում են նախաբանին և բաժանվում են հռոմեական թվանիշներով համարակալված պարբերությունների, որոնցից յուրաքանչյուրը մի ավարտուն միտք է, այսպես կոչված՝ մաս կամ կետ: Որոշ հոդվածներ բաղկացած են մեկից ավելի պարբերությունից կամ ներառում են բազմաստիճան թվարկումներ՝ ըստ անհրաժեշտության: Կարելի է նկատել, որ Յեղասպանության կոնվենցիայի տեքստի յուրահատուկ ձևավորումը թելադրվում է փաստաթղթի միջոցով փոխանցվող տեղեկատվությամբ:

Կասկածից վեր է, որ իրավունքի լեզվին հարկ է առանձնահատուկ խնամքով վերաբերվել, քանզի մեր ամենօրյա գործողությունների մեծ մասը կատարվում է իրավական համատեքստում: Հետևաբար միտում է նկատվում իրավա-

գիտական տեքստերն ավելի կապակցված և հստակ դարձնելու՝ նախընտրելով առավել հետևողականորեն մտածված ձևավորում: Ըստ այդմ օրինագծեր կազմելիս սկսել են մեծ ուշադրություն դարձնել այնպիսի միջոցների, ինչպիսիք են շեղատառ ու թավ գրությունները և այլ գրաֆիկական ձևավորումներ²⁵: Սակայն Կոնվենցիայի տեքստը հարուստ չէ նմանատիպ օրինակներով: Տեքստի անգլերեն և հայերեն տարբերակների մեր քննությամբ պարզվում է, որ անգլերեն տեքստում շեղատառ գրությամբ է ընդգծվում հոդվածների համարները, իսկ հայերեն տարբերակում նույն նպատակի համար թավատառ տեքստ է օգտագործվում: Շեղատառ գրության մի օրինակ է հանդիպում անգլերեն տեքստի Հոդված XIII-ում, որտեղ վերը արդեն հիշատակված լատիներեն *procès-verbal* արտահայտությունը շեղատառ է՝ դրա մետալեզվական արժեքը ընդգծելու նպատակով: Նշված արտահայտության վրա աստղանիշը (*) դրա իմաստը բացատրող հղում է տողատակին: Սակայն վերջինս բացակայում է հայերեն թարգմանության մեջ, քանի որ թարգմանիչը նախընտրել է թիրախ լեզվում կիրառել լատիներեն տերմինի «*արձանագրություն*» հայերեն համարժեքը:

²⁵ Տե՛ս Crystal, D. and Davy, D. (1969) *Investigating English Style*. NY: Longman, p. 189:

Իրավական փաստաթղթերին բնորոշ գծերից կարելի է նշել նաև որոշ բառերի, հատկապես սկզբնաբառի մեծատառ գրությունը: Դա սովորաբար արվում է կա՛մ ընտրված բառերը տեքստի մյուս բառերից ավելի մեծ տառաչափով առանձնացնելու, կա՛մ դրանք ամբողջությամբ գլխատառերով ներկայացնելու միջոցով: Կոնվենցիայի անգլերեն և հայերեն տեքստերի մեր քննությամբ վեր են հանվել մեծատառ գրության բազմաթիվ օրինակներ: Այսպես՝

- *CONVENTION ON THE PREVENTION AND PUNISHMENT OF THE CRIME OF GENOCIDE*

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մեծատառ գրության օրինակ կա նաև անգլերեն նախաբանի սկզբում, որտեղ փաստաթղթի ընդունման կարևորությունը ընդգծելու համար խոսքաշարի որոշ մասեր առանձնացվում են նախադասության մնացած հատվածից: Այս դեպքում մեծատառերով գրվող բառերը սկսվում են է՛լ ավելի մեծ տառաչափով: Այսպես՝

- *HAVING CONSIDERED* the declaration ...
- *RECOGNIZING* that at all periods ...
- *BEING CONVINCED* that ...

Սակայն հայերեն տարբերակի նույն տեղում գլխատառեր չեն կիրառվել, և այս փաստը կարելի է բացատրել անգլերենի և հայերենի գրաբանական ավանդույթների տարբերությամբ.

- *հաշվի առնելով, որ ...*
- *ընդունելով, որ պատմության բոլոր ...*
- *համոզված լինելով, որ ...*

Մեծատառ գրության նմուշներ կարելի է տեսնել նաև կազմակերպությունների և հաստատությունների (*United Nations – Միավորված ազգերի կազմակերպություն, General Assembly – Գլխավոր ասամբլեա, International Court of Justice – Միջազգային դատարան*), պատասխանատու պաշտոնների (*Secretary General – Գլխավոր քարտուղար*), վավերագրերի կամ փաստաթղթերի (*Convention – Կոնվենցիա, Constitutions – Սահմանադրություններ, Charter – Կանոնադրություն*) անվանումներում: Այս բոլոր օրինակներում

բնագիր և թիրախ տեքստերի հեղինակներն առաջնորդվում են տվյալ լեզուներին բնորոշ գրաբանական կանոններով:

Կետադրական նշանների առկայությունը կամ բացակայությունը մեկ այլ կարևոր առանձնահատկություն է, որն արժանի է ուշադրության: Անգլերեն իրավական փաստաթղթերում կետադրության հաճախադեպ կիրառությունների բացակայությունը միտված է խուսափելու կեղծիքներից, քանի որ կետադրական նշանները կարող են հեշտությամբ ջնջվել կամ ավելացվել՝ լուրջ փոփոխությունների ենթարկելով հասցեատիրոջը հաղորդվող սկզբունքային կարևորության իրավական իմաստները: Կետադրության սակավությունը և երկարաշունչ ու չտրոհվող նախադասությունները գործնականում բարձր մակարդակի պաշտոնականության երանգ են հաղորդում անգլերեն այսօրինակ փաստաթղթերին: Չնայած դրան՝ անհրաժեշտության դեպքում կետադրության կիրառման որոշ ձևեր, այնուամենայնիվ, կան: Եթե, օրինակ, կարիք կա բառակապակցության, գլխավոր, երկրորդական և կամ ամբողջ նախադասության սկզբնամասը կամ վերջնամասը շեշտադրելու կամ նոր և էական կարևորություն ունեցող հակադիր տեղեկատվություն տալու, ապա ստորակետերի, կետ-ստորակետերի կամ վերջակետերի գործածությունը միանգամայն օրինաչափ է: Կոն-

վենցիայի անգլերեն տեքստում կետադրության այսպիսի կիրառման տարբեր օրինակներ կան.

- *HEREBY AGREE AS HEREINAFTER PROVIDED:*
- *The following acts shall be punishable:*
 - (a) *Genocide;*
 - (b) *Conspiracy to commit genocide;*
 - (c) *Direct and public incitement to commit genocide;*
- *a national, ethnical, racial or religious group*

Կոնվենցիայի հայերեն տարբերակում կետադրությունը կիրառվում է ոչ միայն վերը նշված դեպքում, այլև հոդվածների գրեթե բոլոր նախադասություններում, և սա օրինաչափ է, քանզի հայերենի շարահյուսության և շարադասության բնույթով պայմանավորված՝ ճշգրիտ կետադրության կիրառությունն անհրաժեշտություն է:

Ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ իրավաբանական տեքստերի ձևավորման սկզբունքները շատ կարևոր են, քանզի տեքստի կառուցվածքը, բովանդակությունը, տրամաբանական հաջորդականությունը դրա մեկնաբանությունը դյուրին դարձնող ուղենիշներ են: Հետևաբար ցանկացած տիպի իրավական փաստաթուղթ կազմելիս

ձևավորման առանձնահատկությունները հաշվի առնելը էական նշանակություն ունի: Դրանց շնորհիվ ստեղծվում է ոճական յուրահատուկ համակարգ, որը կարգավորվում է իրավագիտական անգլերենի որոշակի կանոններով, մինչդեռ դրանց կիրառությունը պաշտոնական ոլորտից դուրս կարող է ոճական սխալներ ծնել, իսկ երբեմն՝ անհարկի բարդացնել տեքստերը: Վերը բերված օրինակները ակնհայտորեն ցույց են տալիս, որ իրավագիտական տեքստերը միանգամայն տարբերվում են այլ բնույթի շարադրանքներից, և դա նախ և առաջ կարելի է բացատրել այդ մասնագիտական տեքստերին բնորոշ յուրահատկություններով:

Չնայած իրավունքի լեզուն որոշակիորեն սահմանափակ է, իրավագիտական շատ տեքստեր զանազան ժանրային դրսևորումներով են հանդես գալիս, և դրանցից յուրաքանչյուրը ձգտում է պահպանել իր ուրույն կարծրատիպային ձևաչափն ու հաստատված կառուցվածքը: Այնուամենայնիվ, անհնար կլիներ հասկանալ կանոններն ու որոշումները իրավագիտության ոլորտում՝ առանց անդրադարձ կատարելու այն պատմական, հասարակական և քաղաքական իրադրությանը, որում դրանք ստեղծվում ու կիրառվում են, քանի որ օրենքն ու իրավունքը ներդրված են հասարակական-մշակութային համատեքստում, որով էլ պայմանավորված են դրանք ստեղծելու և մեկնաբանելու ձևերը:

Ներմուծվելով հասարակության մեջ՝ օրենքն ու իրավունքը փաստորեն դառնում են այս կամ այն երկրի քաղաքական կյանքի անբաժանելի մաս՝ հաճախ կառավարության համար ծառայելով որպես հասարակության վրա ճնշում գործադրելու գործիք: Եվ հենց այս դեպքերում է, որ օրենքն ու իրավունքը դառնում են կառավարության քաղաքական գործելակերպի կարևոր բաղկացուցիչ և օգնում նրան իրագործելու որոշակի քաղաքական նպատակներ՝ կիրառելով իր լիազորությունները: Ուստի ընդհանուր առմամբ գիտակցելով հասարակության՝ հոգեբանական առումով խոցելի կողմերը և լեզվի օգնությամբ հոգեբանական մտաշահարկում իրականացնելով՝ նպատակ է դրվում ներագդելու հասարակության անդամների վրա և փոխելու նրանց ընկալումները հասարակական ու քաղաքական առումներով կարևոր հարցերի վերաբերյալ: Կիրառելով մոլորեցնող ու կեղծ մարտավարություններ՝ նրանք խորամանկորեն և հմտորեն տնօրինում են այս կամ այն իրադրությունը, փոխում հասարակության անդամների վարքագիծը:

Այսպիսով, գրքի հաջորդ գլխի նպատակն է հետազոտել մտաշահարկումը և մտաշահարկային մարտավարությունները, որոնք այդքան լայնորեն կիրառվում են իրավական ոլորտում:

**ԼԵԶՎԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿՈՒՄ ԵՎ
ՄՏԱՇԱՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նախքան լեզվական մտաշահարկման տեսական և գործնական խնդիրներին անդրադառնալը՝ պարզաբանենք *մտաշահարկում* հասկացությունը և դրա էությունը: Ըստ Oxford Advanced Learner's Dictionary of Current English բառարանի՝ մտաշահարկումը *«ինչ-որ մեկին կամ ինչ-որ բան հստորեն և խորամանկորեն կառավարելը կամ ուղղորդելն է՝ հատկապես ազդեցություն կամ անազնիվ մեթոդներ օգտագործելով»*²⁶: Այդօրինակ մեթոդների կիրառումը միտված է հաջողությամբ ի կատար ածելու խարդախ նպատակները, ներգործելու հասարակության վրա և փոխելու մարդկանց վարքագիծը կամ ընկալումները, և դա արվում է գաղտագողի, կեղծ ու մոլորեցնող մարտավարությունների կիրառելով: Անհատական կամ խմբային մտաշահարկում իրականացնելիս դրդապատճառները կարող են տարբեր լինել, բայց դրանց շարքում ամենակարևորներն են ամեն գնով սեփական նպատակներն ու անձնական շահը առաջ մղելու ձգտումը՝ ըստ էության առանց հաշվի առնելու այլ մարդ-

²⁶ Տե՛ս *Oxford Advanced Learner's Dictionary of Current English* (1980) Oxford: OUP, p. 517:

կանց կամ հասարակության շահը, այլոց հետ հարաբերություններում իշխանության ու գերազանցության զգացում ձեռք բերելու երազանքը, մարդկանց միտքը վերահսկելու և կառավարելու բուռն ցանկությունը՝ նրանց անձնահաճության մղումները խթանելու նպատակով²⁷: Այլ կերպ՝ մտաշահարկումը հասարակական երևույթ է, «հաղորդակցական և փոխներգործական հմտություն», երբ մտաշահարկողը, մարդկանց կամքին և շահերին հակառակ, վերահսկում է նրանց: Առօրյայում գործածվելիս մտաշահարկում հասկացությունը բացասական զուգորդություններ է առաջացնում, քանզի դրա կիրառմամբ հասարակական նորմերն են ոտնահարվում²⁸:

Ջ. Ք. Սայմոնի համոզմամբ՝ մտաշահարկային խոսքի կարևորագույն մարտավարական ձևերն են.

- ստելը՝ ինչ-որ բան զանց առնելով (ստելու շատ նուրբ ձև, որն օգտագործվում է քարոզչության նպատակով՝ կանխամտածված թաքցնելով ճշմարտությունը),

²⁷ Տե՛ս Braiker, H. B. (2004) *Who is Pulling Your Strings? How to Break the Cycle of Manipulation?* NY: McGraw-Hill:

²⁸ Տե՛ս van Dijk, T. A. (2006) *Discourse and Manipulation* // *Discourse and Society*, 17/2, p. 360:

- Ժխտելը (երբ հրաժարվում են ընդունել ինչ-որ բանի սխալ լինելը),
- բանարկելը (փաստերը նենգափոխված ներկայացնելու սեփական ոչ պատշաճ վարքագիծը պատճառաբանելը),
- նվազեցնելը (բանարկությանը ուղեկցվող ժխտումը),
- ընտրողական ուշադրության կամ անուշադրության արժանացնելը (երբ ուշադրությունը կենտրոնացվում է գործողությունների նախընտրելի ծրագրի շրջանակներում գտնվող ցանկացած բանի վրա, և անտեսվում է այն ամենը, ինչը կարող է ունկնդրին կամ ընթերցողին շեղել խոսողի նախընտրելի ծրագրի սահմաններից),
- ուշադրությունը շեղելը (երբ խոսակցությունը նպատակադրված ուղղորդվում է դեպի մեկ այլ թեմա),
- խուսափելը (երբ տրվում են ոչ տեղին, մի թեմայից մյուսին ցատկող անորոշ պատասխաններ),
- քողարկված ձևով ահաբեկելը (երբ, կիրառելով անուղղակի կամ քողարկված սպառնալիքներ, մտաշահարկման գոհին ստիպում են պաշտպանողական դիրք գրավել),
- գոհին զրպարտելը (երբ, քողարկելով հարձակման մտադրությունը, գոհին ստիպում են պաշտպանողա-

կան դիրք գրավել, և ապա հանիրավի մեղադրում նրան իր դիրքերը պաշտպանելու համար)²⁹:

Ակնհայտ է, որ մտաշահարկումը սերտորեն առնչվում է իշխանության, ավելի ճիշտ՝ իշխանության չարաշահման և գերիշխանության հասնելու հետ: Դիսկուրսի միջոցով անօրինական ազդեցության հասնելու ջանքերի գործադրումը ստիպում է ունկնդրին կամ ընթացողին հավատալ այն ամենին, ինչ ներկայացնում կամ կատարում է մտաշահարկողը ի շահ իրեն և ի վնաս շահարկվողների³⁰:

Այսպիսով, ընդհանուր առմամբ մտաշահարկման շնորհիվ անհատը կամ խումբը հասնում է ցանկալի արդյունքի՝ անտեսելով կամ վնասելով մյուս կողմի կամ, լայն առումով, հանրության ձգտումները՝ նպատակ ունենալով գերիշխել և վերարտադրվել տարբեր ձևերով: Մտաշահարկումը գլխավորապես իրագործվում է առերևույթ օբյեկտիվ, համոզիչ, խորամանկ և ապակողմնորոշող լեզվի օգնությամբ: Իհարկե, բազմաթիվ այլ մտաշահարկային հմտություններ նույն-

²⁹ Տե՛ս Simon, G. K. (1996) *In Sheep's Clothing: Understanding and Dealing with Manipulative People*. Michigan: Parkhurst Brothers Publishers Inc:

³⁰ Տե՛ս Van Dijk, T. A. (2006) *Discourse and manipulation // Discourse and Society*, 17 (2), p. 360:

պես կան, որոնք կիրառվում են տարբեր հաղորդակցական իրադրություններում, սակայն այս աշխատանքում, հետազոտության թեմայով պայմանավորված, ուշադրությունը կենտրոնացնում ենք այն մարտավարությունների վրա, որոնք, անմիջականորեն թե միջնորդավորված, առնչվում են իրավագիտական դիսկուրսում իրացվող բառային մտաշահարկմանը³¹:

Մտաշահարկման երևույթը լավ պատկերացնելու համար էապես կարևոր է հասկանալ, որ այս տերմինը մտովի զուգորդվում է հնարամտություն ու ճարտարամտություն հասկացությունների հետ և միանգամայն բնորոշ է լեզվական մտաշահարկման համակարգին³²: Լինելով հաղորդակցության միջոց՝ լեզուն ոչ միայն ծառայում է տեղեկատվություն փոխանցելու նպատակին, այլև ներգործում խոսակիցների վրա և կարգավորում նրանց հասարակական դիրքը, միջանձնյա հարաբերությունները, մտավոր վիճակն

³¹ Անօրինական, մտաշահարկային ազդեցություն կարելի է գործել նաև ոչ բառային միջոցներով, ինչպիսիք են, օրինակ, պատկերները, լուսանկարները, ծաղրանկարները, տեսանյութերը: Քաղաքական և իրավագիտական դիսկուրսներից բացի՝ այս երևույթն ավելի տիպական է զանգվածային մեդիա ոլորտում, որտեղ հաճախ են կիրառվում մտաշահարկային մարտավարությունները:

³² Տե՛ս Dotsenko, E. (1997) *Psychology of Manipulation: Phenomena, Mechanisms and Protection*. Moscow: CheRo Publisher State University:

ու վարքագիծը: Այս առումով լեզվական մտաշահարկումը կարելի է սահմանել որպես անհատական կամ խմբային գիտակցության ու վարքագծի կառավարում, որն իրականացվում է բնական լեզվի տարբեր միջոցներով³³: Այն, ըստ էության, «լեզվի գիտակցված կիրառությունն է՝ զարտուղի ճանապարհով այլոց վերահսկելու և կառավարելու համար»³⁴:

Լեզվի մտաշահարկումը բառերի իմաստները նենգափոխելու և աղավաղելու միջոցով օբյեկտիվ իրականությունը խեղաթյուրելու նպատակ է հետապնդում և երկդիմի ու աղավաղված խոսքով, որի միտումնավորությունը բնավ ակնհայտ չէ, ներկայացնում է ինչ-որ պատրանքային սուբյեկտիվ իրականություն: Ընդհանուր առմամբ՝ որպես լեզվական մտաշահարկման չափորոշիչ՝ միտումնավորությունը խմբի կամ հասարակության վրա խիստ բացասական ազդեցություն է թողնում: Ընդ որում այս երևույթը հեշտությամբ տեսանելի չէ, քանզի այն արտահայտվում է համակարգային լեզվական կաղապարներով (բառային միավոր-

³³ Տե՛ս Grischechko, O. (2013) *Communicative Effect Achieved through Speech Acts of Manipulation* // IJCRSEE, 1 (2), p. 2:

³⁴ Ն. Ֆերքլոուն բացատրում է, որ լեզվի անագնիվ կիրառության մասին կարելի է խոսել հենց այն դեպքում, երբ խոսքի ռազմավարություններն ու նպատակները քողարկվում են: Տե՛ս Fairclough N. (1994) *Manipulation* // *Encyclopedia of Language and Linguistics*. Kidlington: Pergamon Press, p. 2360:

ներ, քերականական ձևեր և շարահյուսական կառույցներ), որոնք, չխախտելով դիսկուրսի համակարգային սովորական կիրառությունների օրինաչափությունը, օգտագործվում են նաև ոչ մտաշահարկային հաղորդակցությանը բնորոշ նպատակներ ու գործառույթներ իրականացնելու համար: Մյուս կողմից, դիսկուրսի այդ նույն լեզվական կաղապարների վերլուծության և մեկնաբանության շնորհիվ հնարավոր է լինում բացահայտել խոսողի կամ գրողի հետին նպատակները:

Տարբեր մակարդակների լեզվական նշանները օգնում են վեր հանելու այն մտադրությունները, որոնք խոսողը, շնորհիվ կառավարման իր հմտությունների, կարողանում է խնամքով քողարկել խոսքում³⁵, և ի ցույց դնելու լեզվական շահարկումների ու խաթարումների դեպքերը, որոնք գիտակցված կառավարման են ենթարկվել խոսողի կողմից: Այլ կերպ՝ դիսկուրսի մտաշահարկային բնույթը պայմանավորված է ոչ թե որոշակի լեզվական միավորների կիրառությամբ, այլ նրանով, թե ինչպիսին է այդ միավորների և մտաշահարկողի նպատակների ու դրդապատճառների հա-

³⁵ Sté u Akopova, A. (2013) *Linguistic Manipulation: Definition and Types* // IJCRSEE, 1 (2), p. 3:

րաբերակցությունը: Մտաշահարկային դիսկուրսի վերլուծությունը ցույց է տալիս, որ լեզուն ինքնին ինչ-որ չափով խրախուսում է իրականությունից շեղվելու, խոսքը աղավաղելու միտումը և այնպիսի լեզվական միջոցների կիրառումը, որոնք հնարավորություն են ընձեռում անստույգ, անորոշ ու ծածուկ հնարներ կիրառել ճշմարտությունն արտահայտելու համար:

Դիսկուրսի մտաշահարկային վերաբերմունք արտահայտող կառույցները, ըստ վան Դեյկի, շեշտադրում են մի կողմից խոսողի առավելությունները՝ դիրքի, իշխանության, հեղինակության կամ բարոյականության առումներով և մյուս կողմից՝ մտաշահարկման ենթարկվողների ստորադաս դիրքը, գիտելիքի պակասը և այլն, ուշադրություն են հրավիրում հատկապես այն համոզմունքների վրա, որոնք մտաշահարկողը պարտադրում է իր ունկնդրին կամ ընթերցողին՝ որոշակի փաստարկների ու ապացույցների հիման վրա տեղեկություններ հաղորդելով, դրանով իսկ իր համոզմունքներն ավելի ընդունելի դարձնելով և վարկաբեկելով այլընտրանքային աղբյուրները և իր հասցեատերերի գաղափարները, կարծիքներն ու վերաբերմունքը³⁶: Այսպի-

³⁶ Sté u Van Dijk, T. A. (2006) *Discourse and Manipulation // Discourse and Society*, 17/2, p. 376:

սով, ուղղորդող, մտաշահարկային լեզվի նպատակն է խոսքի միջոցով կենտրոնանալ մտաշահարկվողների սոցիալական բնութագրերի վրա՝ ստիպելու նրանց ընդունել մտաշահարկողի պարտադրած դիրքորոշումները:

Լեզվական մտաշահարկում իրականացնելիս սովորաբար սկսում են խոսքի ավելի փոքր ու առանձին հատվածներից կամ լեզվական ձևերից և ապա անցում կատարում ավելի մեծ լեզվական միավորների, որոնք էլ, ենթարկվելով որոշ փոփոխությունների, խեղաթյուրումների, աղավաղումների, ինչպես պարզվում է, համեմատաբար անսպասելի են դառնում հասցեատիրոջ համար³⁷: Լեզվի միջոցով կատարվող ուղղորդման հիմքում այն փաստն է, որ ունկնդիրը կամ ընթերցողը նախ և առաջ ընկալում և մեկնաբանում է հատուկ ընտրված բառերի հիմնական իմաստները, որոնք դրական տեղեկատվություն են պարունակում, և ուշադրություն չի դարձնում տողերի արանքում թաքնված բացասական երանգներին:

Բառային ուղղորդման շինծու բնույթով է կանխորոշվում երկիմաստ արտահայտությունների և իմաստային առումով

³⁷ Sté u Danciu, V. (2014) *Manipulative Marketing: Persuasion and Manipulation of the Customer through Advertising* // Theoretical and Applied Economics, 2 (591), p. 25:

ոչ հստակ միավորների (կրկնակ բառերի) գործածությունը մտաշահարկային դիսկուրսում, և հենց այս պատճառով է, որ այսպիսի դիսկուրսի իմաստային որակների վերհանումը հեշտ գործ չէ, քանզի վերահսկման ու կառավարման համար կիրառվող մարտավարությունները իրենք են պահանջում այնպիսի բառերի գործածություն, որոնք մտաշահարկային վարվելակերպի մեխանիզմներ են ներմուծում դիսկուրս³⁸: Լեզվական մտաշահարկումը կարող է լինել՝ հանրային (հրապարակային ողջույններում, երդումներում, խնդրագրերում և այլն), կամային (խնդրանքներում, միջնորդություններում, մերժումներում և այլն), խրատական և գնահատողական (միջանձնային հարաբերություններ հաստատող այնպիսի դիսկուրսներում, ինչպիսիք են հակաճառելը, դրվատանք արտահայտելը, վտանգ ահազանգելը և այլն)³⁹:

Մտաշահարկումն ուղղակիորեն կապված է իշխանության հասնելու, մարդկանց վերահսկելու և ամբոխավարման հռետորաբանություն կիրառելու հետ, ընդ որում մտաշահարկում իրականացնողները (անհատ լինի թե խումբ)

³⁸ Տե՛ս *Linguistic Persuasion* (2017) // Wikibooks:

³⁹ Տե՛ս Tarasov, E. (1990) *Linguistic Manipulation: Methodology and Theory*. Moscow: MSU Press, p. 123:

հմտորեն տիրապետում են այս մեխանիզմների կիրառման վարպետությանը: Ճարտար լեզուն և համոզելու անվերապահ հմտությունը միշտ էլ օգնում են նրանց գերակա դեր ստանձնելու ցանկացած հարաբերություններում: Եվ քանի որ նրանց մտահոգությունը ոչ թե բարձրագույն արժեքներն են, այլ իրենց շահերի բավարարումը, նրանք շատ զգուշավոր են ներկայանում, որպես թե կրողն են նույն արժեքների ու գաղափարների, ինչ շահարկվողները: Իրականում հմուտ շահարկողի բուն նպատակը այլոց մտքերն ու գաղափարները իր հսկողության տակ պահելն է: Թվացյալ բանական ու հիմնավորված մեթոդներ գործադրելով է, որ նրանց հաջողվում է անկողմնակալի ու խելամիտի տպավորություն գործել ունկնդրի վրա: Սակայն, փաստորեն, ո՛չ տեղեկատվությունն է լիարժեք մատուցվում հասցեատիրոջը, ո՛չ էլ տեսակետներն ու համոզմունքները⁴⁰:

Ինչպես նշել ենք, լեզվական միավորների խաթարումներն ու շահարկված գործածությունը լեզվական մտաշահարկման հիմնական բաղադրիչներն են: Կասկածից վեր է, որ իրականության հասկանալիությունը կախված է լեզվից

⁴⁰ Sté u Richard, P. and Elder, L. (2004) *The Thinker's Guide to Fallacies: The Art of Mental Trickery and Manipulation* // Foundation for Critical Thinking, pp. 4-5:

և իրագործվում է դրա միջոցով: Լեզվի այս միջնորդական առաքելությունը, սակայն, մեծապես այլասերում և խեղաթյուրում են քաղաքական գործիչներն ու օրենսդիրները, երբ նույնիսկ ամենաակնհայտ իրողությունները քողարկված ու սխալական ենթադրություններով են ներկայացնում: Լեզուն չարաշահելով՝ նրանք իրականում խախտում են ճշմարտությունը հաղորդելու դրա հիմնական գործառույթը՝ դրանով իսկ խթանելով ստին առնչվող սխալ գուգորությունների ծնունդը: Խոսքի այս ռազմավարությունը կառավարում է հասցեատերերին և տրամադրում նրանց այնպես գործելու, որ հասցեագրողը կարողանա շոշափելի արդյունքներ ստանալ: Այլ կերպ՝ բռնությունը, քարոզչությունն ու իշխանության չարաշահումը հանգեցնում են լեզվի չարաշահման⁴¹, որի հետևանքով խեղաթյուրվում և փոփոխվում են նույնիսկ ամենաակնհայտ ճշմարտությունները: Դա նշանակում է, որ լեզուն չարաշահվում է հանուն իշխանությունն ձեռք բերելու: Լեզվի խեղաթյուրումը, որ նույնն է, ինչ լեզվական միավորների շփոթեցնող ու ապակողմնորոշող կիրառությունը, լեզվական մտաշահարկման

⁴¹ Sté u Pieper, J. (1992) *Abuse of Language. Abuse of Power*. San Francisco: Ignatius Press:

ամենաբնորոշ հատկանիշն է, և այս վտանգավոր գործընթացը կարող է աղճատել ու այլասերել մարդու գիտակցությունն ու միտքը⁴²: Լեզվի չարաշահում իրականացնելիս այլափոխվում է իրական պատկերը, ինչը նշանակում է, որ խնդրո առարկան հասարակությանը կողմնակալ է ներկայացվում:

Լեզվական մտաշահարկումը իրագործելի է լեզվի քերականական, բառային, շարահյուսական, գործաբանական և ամենակարևորը՝ իմաստային հայեցակերպերում⁴³: Լեզվական տարբեր միջոցների օգնությամբ շահարկման արդյունքում մտաշահարկողը ձեռք է բերում իր համար ցանկալի հեղինակություն ու ճանաչում: Մտաշահարկային մեխանիզմների և ուղղորդող լեզվի ճիշտ մեկնաբանությունը էապես կարևոր է ոչ միայն անհատ հասցեատերերի կամ մարդկանց առանձին խմբերի, այլև ընդհանուր առմամբ

⁴² Այս մասին հետաքրքիր են Ջորջ Օրվելի անդրադարձները: Տե՛ս, Օրինակ՝ Orwell, G. (2006) *Politics and the English Language*. Peterborough: Broadview Press:

⁴³ Ամենին պատահական չէ, հետևաբար, որ Թ.Ս. վան Դեյկը նշում է ուղղորդող դիսկուրսում կիրառվող ռազմավարությունների ընդհանուր առմամբ իմաստային բնույթը, այսինքն՝ սովորաբար ուղղորդվում է խոսքի բովանդակությունը: Տե՛ս van Dijk T. A. (2006) *Discourse and Manipulation // Discourse and Society*, 17/2, p. 376). Տե՛ս նաև Khudhayir, S. (2013) *Manipulation of Meaning in Political Discourse // Research Gate*, p. 4:

հասարակության համար, քանզի հենց դա է ճնշումներից խուսափելու միակ ուղին:

Թեև ուղղորդելու նպատակով կիրառվող տարբեր լեզվական տարրերի (ձևաբանական, իմաստային, շարահյուսական) հնարավոր ընտրությունը կարող է կամայական թվալ քաղաքական և իրավաբանական դիսկուրսներում, իրականում դա այդպես չէ, քանի որ այդ ընտրությունը սովորաբար արվում է այն դեպքում, երբ խոսողը տարբեր նպատակներ է հետապնդում: Ուստի միանգամայն իրավացի է Բ. Ջոնսթոնը, որի կարծիքով՝ եթե այլընտրանքային կառույցների գոյությունը թույլատրելի է, ապա դա ակնհայտորեն նշանակում է, որ դրանք, այնուամենայնիվ, տարբեր գործառույթներ են կատարում⁴⁴: Դեռ ավելին՝ լեզվական միավորների այս կամ այն ընտրությունը կարող է ի ցույց դնել որոշակի մտածելակերպ, աշխարհայացք կամ գաղափարախոսություն, որն էլ, իր հերթին, կօգնի ուղղորդողին իրագործելու մարդկանց և, լայն առումով, հասարակության մտաշահարկում՝ իր մտքին որոշակի ձևակերպում տալով և օգտագործելով տարբեր քերականական ու ոճական միջոցներ: Հասկանալի է, հետևաբար, որ դրանց համապատաս-

⁴⁴ Sté u Johnstone B. (2002) Discourse Analysis. Oxford: Blackwell publishing:

խան մեկնաբանությամբ կարելի է բացահայտել խոսողի մտադրությունները⁴⁵: Լեզվի այսօրինակ օգտագործումը որպես քաղաքական ծրագրեր արտահայտելու միջոց, ծառայում է իբրև մարդկանց գիտակցության վրա ազդելու գործիք քաղաքական հարթակներում ընդհանրապես և իշխանության համար մղվող քաղաքական պայքարում մասնավորապես: Դիսկուրսի այսպիսի մեխանիզմներով անուղղակի ճնշում է գործադրվում հասարակական կարծիքի վրա, որն էլ դրդում է մարդկանց կա՛մ ենթագիտակցաբար կատարելու այս կամ այն գործողությունը (ինչ-որ տեղեկատվություն հաղորդելու, վարքագիծը փոխելու և այլն), կա՛մ ընդհակառակը՝ ըստ ցանկության ու մտադրությունների⁴⁶: Ազդեցությունն ու վերահսկումը լավագույնս իրագործվում են ամբողջավարտության ու քարոզչության համատեքստում համոզման դիսկուրսի կիրառումով՝ հաճախ բաղաձայնությի, հանգավորման, խոսքի ռիթմայնացման, գոյականացման, հակադարձ տերմինների, նորակազմությունների, ցուցանական միավորների, մեղմասությունների, կոպտասություն-

⁴⁵ Sî'u Berariu, E. C. and Peterlicean, A. (2016) *The Power of Language in Political Discourse // Multicultural Representations. Literature and Discourse as Forms of Dialogue*. Vol. 4. Tirgu Mures: Arhipelag XXI Press, p. 189:

⁴⁶ Sî'u Troshina, N. N. (1990) *Stylistic Parameters of Texts of Mass Communication and Realization of Communicative Strategy of the Subject of Speech Influence*. Moscow: MSU Press:

ների, խրթին բառապաշարի, օտարաբանությունների, զեղչված նախադասությունների և շրջուն շարադասության օգնությամբ⁴⁷: Ու թեև իրավաբանական և քաղաքական դիսկուրսներում խոսքի ուղղորդումը իրականացվում է բոլոր մակարդակների լեզվական միավորներով (բառային, քերականական, շարահյուսական և այլն), այդուհանդերձ ամենաընդգրկուն շերտը բառաիմաստայինն է, որն ուղղակիորեն առնչվում է վիճարկելի հասկացություններին, խորը և մակերեսային հասկացմանը և կանխենթադրույթին⁴⁸: Վիճարկելի հասկացությունները թեև կեղծ են, բայց, որպես կանոն, կարող են միանգամայն տրամաբանական թվալ: Դե իհարկե, դրանք իրականում հակադրվում են ռացիոնալ փաստարկմանն ու վկայություններին, սակայն ապացուցել այդ իրողությունը այնքան էլ հեշտ գործ չէ, քանզի շահարկողը միշտ էլ կարող է հնարավորություն գտնել իր կեղծ գաղափարները այլ փաստարկներով հիմնավորելու⁴⁹: Լեզվական վերլուծությամբ է միայն, որ կարելի է բացահայ-

⁴⁷ Տե՛ս u Kenzhekanova, K. et al (2015) *Manipulation in Political Discourse of Mass Media* // Mediterranean Journal of Social Sciences, 4 (6), p. 325:

⁴⁸ Սյս մասին տե՛ս u Khudhayir, S. (2013) *Manipulation of Meaning in Political Discourse* // Research Gate, p. 4:

⁴⁹ Տե՛ս u Gallie, W. B. (1956) *Essentially Contested Concepts* // Proceedings of the Aristotelian Society, New Series, Vol. 56, p. 169:

տել շահարկվող հասկացությունների կեղծությունը՝ միտված քողարկելու իրականությունն ու ճշմարտությունը:

Խորը և մակերեսային հասկացումը առնչվում է խոսողի կամքով ընտրված լեզվական միավորների իմաստային ճշգրտությանը կամ անորոշությանը: Այս պարագայում էապես կարևորվում է բառային միավորների իմաստային փոխաձևությունը, այսինքն՝ դրանց իմաստային պարզությունն ու հստակությունը կամ անորոշությունն ու երկիմաստությունը, որոնցով տեղեկատվություն է փոխանցվում⁵⁰:

Բառանյութի դիտարկման այս մոտեցումը օգնում է հաղորդակցության ընթացքում հասկանալ ոչ միայն դիսկուրսի լեզվական միավորների բնույթը, այլև պազաբանել, թե ինչ մեխանիզմներ են գործադրվում մտաշահարկում իրականացնելու համար:

Ինչ վերաբերում է կանխենթադրույթին, ապա կարելի է վստահաբար ասել, որ այն դիսկուրսի կանոնագույն բնութագրական գծերից է, քանզի հաճախ, որևէ հարց չհաստատվելու դեպքում կարող է մատուցվել որպես կանխենթադրույթ: Հետևաբար՝ ինչպես իրավամբ նշում է Ս. Խուդհայիրը, հանրությանը փոխանցվող գիտելիքի զգալի մասը

⁵⁰ Sté u Chilton, P. (2008) *Political Terminology // Handbook of Applied Linguistics*, Vol. 4, Berlin: Walter de Gruyter, p. 227:

ավելի շատ կանխակալ ենթադրություն է, քան հաստատված տեղեկություն, ուստի հանրությունն ինքը կարող է փորձել հասկանալ դրա դրական կամ ժխտական միտվածությունը⁵¹: Ակնհայտ է սակայն, որ բառային միավորները այսպիսի լեզվական իրադրություններում օգտագործվում են՝ ծառայելու որոշակի քաղաքական ծրագրերի, լեզվի միջոցով մարդկանց կառավարելու և ուղղորդելու նպատակներին:

Իրավագիտական դիսկուրսում լեզվական մտաշահարկումների առկայության գիտակցումը, անկասկած, կօգնի խուսափել դիսկուրսի մտաշահարկման սոցիալ-հոգեբանական ազդեցություններից և զերծ մնալ գիտակցությունը կառավարելու, բռնարարքների և նույնիսկ խոսքային ագրեսիայի հետևանքներից:

Իրավագիտական դիսկուրսի լեզվաբանական դաշտը կապված է ոչ միայն դիսկուրսի լեզվական մտաշահարկման, այլև իրավագիտական տեքստում առկա իրավական, հոգեբանական, պատմական և մշակութային որոշակի տարրերի առկայության հետ: Լեզվական քաղաքականությունը լիովին կախված է համատեքստային գործոններից, և

⁵¹ Տե՛ս u Khudhayir, S. (2013) *Manipulation of Meaning in Political Discourse* // Research Gate, p. 9:

շատ կարևոր է, որ այս կամ այն խնդիրը քննելիս այն դիտարկվի պատմության հոլովություն, այսինքն՝ կոնկրետ տեղի ու ժամանակաշրջանի հաշվառումով: Իրավագիտական դիսկուրսում մտաշահարկումը չափազանց մտածված ու կշռադատված խոսքային տեխնիկայի կիրառություն է, և հետևաբար՝ անհրաժեշտ է, որ թե՛ մասնագետները և թե՛ հասարակության լայն զանգվածը կարողանան թափանցել այդ կիրառությունների էության մեջ և ընկալեն ոչ միայն սովյալ խոսքային տեխնիկայի կիրառման եղանակները, այլև հեղինակի մտադրությունները, նպատակները և դրանց լեզվական դրսևորումները: Այսպիսով՝ յուրաքանչյուր իրավագիտական շարադրանքի ընկալման ու արժևորման մեջ էապես կարևոր է հաշվի առնել ժամանակի սոցիալ-պատմական համատեքստը:

Ինչպես վերը նշվել է, իրավագիտության լեզուն տրամաբանական է և պաշտոնականացված ձևաչափ ունի: Իր լեզվական բնութագրակներով (բառային, ձևաբանական, շարահյուսական, իմաստային և այլն) այն տարբերվում է սովորական բնական լեզվից⁵²: Հենց այս բնութագրական գծերն են, որ իրավագիտության լեզվի կիրառություններում

⁵² Sté u Wydick, R. (2005) *Plain English for Lawyers: Teacher's Manual*. Durham: Carolina Academic Press, p. 10:

ապահովում են տրամաբանական հետևողականություն, վավերականություն, ավարտունություն, հակիրճություն, պարզություն, ճշգրտություն և ողջամտություն, և դրանց քննության արդյունքները կնպաստեն ավելի ճշգրիտ ընկալել, հասկանալ ու հաղորդել իրավագիտական տեղեկատվությունը⁵³: Մակայն միտումնավոր ուղղորդվող ու շահարկված իրավագիտական դիսկուրսը երկիմաստ, անուղղակի և քողարկված լեզվի պատճառով հաճախ խոչընդոտում է հասկացումն ու հաղորդումը⁵⁴:

Մտաշահարկման իրավագիտական սահմանման մեջ այդ հասկացությանը վերագրվում են *«փոփոխության, վերահսկման, գերիշխանության գործադրման, չարաշահման, խաբեությանը ազդեցության հասնելու, կառավարելու, խորամանկելու, խուսանավելու»* և այսօրինակ այլ իմաստներ⁵⁵: Ինչպես երևում է հոմանշային բացատրություններից, այս միավորների մեծ մասը, ընդհանուր առմամբ, կապված

⁵³ Հմտ. Ռ. Վիդիքի չորս C-երի (Clear, Correct, Concise and Complete) տեսության հետ: Տե՛ս նույն տեղում p. 3, 10:

⁵⁴ Թերևս այս է պատճառը, որ իրավագիտության լեզվաոճը երբեմն պիտակավորվում է՝ որպես *«ընթերցողի համար ոչ բարեկամ»* (reader-unfriendly) ոճ: Տե՛ս և, օրինակ, B. Butler in *Strategies for Clarity in Legal Writing* (2013) // Clarity, Journal of the International Association Promoting Plain Legal Language, Vol. 70, p. 32:

⁵⁵ Տե՛ս *Legal Dictionary* (2018) The Free Dictionary by Farlex:

են մտաշահարկման գործողության կամ գործընթացի և իրավագիտական դիսկուրսում իրականացվող լեզվական շահարկման հետ: Իրավական փաստաթղթում որոշակի լեզվական միավորներ փոփոխելով, վերասահմանելով և հաճախ նաև հնարամտորեն նենգափոխելով՝ հնարավոր է մոլորեցնել մարդկանց և ստիպել, որ կարդացածը հասցեագրողի օգտին մեկնաբանեն:

Այսպիսով, մտաշահարկումը լեզվի՝ որոշակի ռազմավարություններ և նպատակներ իրականացնող կիրառություն է և միտված է անազնիվ ձևով ազդեցություն գործելու հասցեատիրոջ վրա:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
301 ՀՈՂՎԱԾԸ

Թուրքիայի իրավական համակարգի հիմքերը ամրագրված են 1982 թ. ընդունված Սահմանադրությամբ:

Թուրքիան ունի մի իրավական համակարգ, որն ամբողջությամբ ինտեգրվել է եվրոպական մայրցամաքի համակարգին: Երկրի քրեական օրենսգիրքը ընդհանրություն ունի իտալականի հետ:

Թուրքիայում հիմնական սահմանադրական իրավունքները և պարտականությունները ներառում են դավանանքի, կրոնի, խոլի և համոզմունքների ազատություն, իրավունքների պաշտպանության պահանջ, դատարանում ինքնապաշտպանվելու, ցանկացած ոլորտում աշխատելու և համաձայնագրեր կնքելու և ըստ ֆինանսական հնարավորությունների հարկեր վճարելու իրավունք⁵⁶:

Թուրքիայի քրեական օրենսգիրքը ուժի մեջ է մտել 2005 թ. հունվարի 1-ին: Ինչ վերաբերում է խնդրո առարկա իրավական դրույթին (հոդված 301), այն նոր չէ թուրքական օրենսդրության մեջ: Թուրքիայի նախկին քրեական օրենս-

⁵⁶ Տե՛ս *Turkish Legal System*. (2014), p. 1:

գրքի 159 հոդվածը, որն ուժի մեջ էր 1926 թվից և գործում էր մինչև 2005-ը, գրեթե նույն բովանդակությունն ուներ, ընդ որում՝ այդ օրենսգիրքն ուներ նաև մեկ այլ հոդված՝ 160-ը, ըստ որի՝ քրեական գործի շրջանակներում դատաքննություն սկսելու համար անհրաժեշտ էր թույլտվություն ստանալ Արդարադատության նախարարությունից:

Ըստ Թուրքիայի քրեական օրենսգրքի հոդված 1-ի՝ քրեական օրենսգրքի նպատակն է «պաշտպանել անհատի իրավունքներն ու ազատությունները, հասարակական կարգը և անվտանգությունը, օրենքի գերակայությունը, հանրության խաղաղ կյանքը, հասարակության առողջությունն ու շրջակա միջավայրը և կանխարգելել հանցագործությունները: Այդ նպատակին հասնելու համար այս օրենսդրական ակտով նախատեսվում են քրեական պատասխանատվություն, քրեական պատիժներ, տույժեր և անվտանգության միջոցառումներ»⁵⁷:

«Օբյեկտիվ քրեական պատասխանատվություն» իրագործելու համար ձեռնարկվող պաշտոնական գործողություններից է Թուրքիայի քրեական օրենսգրքի երրորդ գլխի

⁵⁷ Տե՛ս *Penal Code of Turkey*. (2016) // Council of Europe. CDL-REF (2016)011. Engl. only. Legislation Line, p. 2:

(Իրավախախտումներ ընդդեմ ինքնիշխան պետության խորհրդանիշների և պետական մարմինների վարկանիշի)
301 հոդվածը, որը ներկայացված է, «Թուրք ազգի, Թուրքիայի Հանրապետության, պետական մարմինների և ինստիտուտների անարգում» վերնագրի ներքո: Այն ապօրինություն է համարում Թուրքիան, թուրքերին կամ թուրքական կառավարական հաստատությունները անարգելը⁵⁸: Եվրամիությանն անդամակցելու բանակցություններին ընդառաջ՝ Թուրքիան այդ միջազգային կառույցի չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով 2005 թ. հունիսի 1-ին հոդվածը ներկայացրել է որպես քրեական իրավունքի բարեփոխման փաթեթի մաս: Սակայն արդեն 2005 թվականի դեկտեմբերին «Amnesty International»-ը 301 հոդվածը համարել է ուղղակի սպառնալիք մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին⁵⁹:

301 հոդվածի սկզբնական տարբերակում *թուրքականության անարգումը (denigration of Turkishness)* համարվում էր հանցագործություն: Ընդհանուր առմամբ՝ տեքստն այնպես

⁵⁸ Այս վերնագրի տակ 301 հոդվածը ներկայացված է Թուրքիայի քրեական օրենսգրքի անգլերեն տարբերակում (տե՛ս *Penal Code of Turkey* (2016), p. 99):

⁵⁹ Տե՛ս *Turkey: Article 301 is a Threat to Freedom of Expression and Must be Repealed Now // Amnesty International Public Statement* (December 2005):

էր ձևակերպված, որ քրեականացվում էր քննադատական մեկնաբանությունների և հաղորդումների, թուրքերի կամ Թուրքիայի նկատմամբ անհավանություն կամ բացասական վերաբերմունք արտահայտող կարծիքների լայն շրջանակ: Սկզբնական շրջանում հողվածի տեքստը առանձնակի ուշադրության չարժանացավ, սակայն հետագայում՝ դատական մեծաքանակ աղմկահարույց գործերից և քրեական հետաքննություններից հետո այն բազմիցս արձարծվեց թե՛ Թուրքիայում և թե՛ Եվրամիությունում: Ավելի քան 60 հայտնի համալսարանական պրոֆեսորներ, գրողներ, լրագրողներ 2005 թ. հունիսից մինչև 2006 թ. հուլիս ընկած ժամանակահատվածում դատական կարգով հետապնդվեցին հողվածն ուժի մեջ մտնելուց հետո: Այս մարդիկ հայտնվեցին ոչ միայն երեք տարվա ազատազրկման, այլև ահաբեկման ու բռնության ենթարկվելու հեռանկարի առջև: Վառ օրինակ է հանրահայտ թուրք արձակագիր Էլիֆ Շաֆակը, որը 2006 թ. հուլիսին բախվեց անարդար դատավարության փաստին: Հետաքրքիրն այն է, որ Շաֆակին չէին կարող ուղղակիորեն մեղադրել թուրքականությունը հրապարակավ անարգելու համար, քանի որ նա ինքը ո՛չ ֆիզիկական գործողությամբ և ո՛չ էլ խոսքով որևէ կերպ չէր գործել պետության դեմ: Սակայն նրան պատասխանատու ճանաչեցին և դատական պատասխանատվության ենթարկեցին

«Մտամբուլի ընկեցիկը» վեպի գեղարվեստական կերպարի հնչեցրած արտահայտությունների համար⁶⁰: Դա, ըստ էության, առաջին թուրքական վեպն էր, որն «ուղղակիորեն անդրադառնում էր օսմանյան իշխանությունների վերջին տարիներին կատարած սպանդներին, վայրագություններին և տեղահանումներին, որոնք ոչնչացրին երկրի հայ բնակչությունը»⁶¹: Այս դեպքը չհարուցեց հրատարակիչների և գրքի ընթերցողների զարմանքը, քանզի նրանք չէին էլ կասկածում, որ հենց այդպիսի վերաբերմունք է սպասվում ցանկացած լավ գրողի, որի խստապահանջ ձայնը մի օր քարձր կհնչի ու լսելի կդառնա Թուրքիայում: Իր դեմ բերված մեղադրանքների մասին խոսելիս Էլիֆ Շաֆակը համոզմունք էր հայտնում, որ դրանց հիմքում ընկած պատճառը իր ակտիվ անդրադարձերն էին արգելված թեմաների և

⁶⁰ Էլիֆ Շաֆակի «Մտամբուլի ընկեցիկը» (2005) վեպը գրվել է անգլերեն, և ապա 2006 թ. տպագրվել է վեպի թուրքերեն թարգմանությունը: Գրքի հերոսներից մեկը՝ Արմանուշը, ասում է. «Ես ցեղասպանությունից փրկվածների թոռ եմ, որոնք 1915 թվին կորցրել են բոլոր հարազատներին թուրք մսագործների պատճառով, բայց քանի որ ինձ մեծացրել է Մուստաֆա անունով մի թուրք, ես գաղափարական մշակման եմ ենթարկվել, որպեսզի ժխտեմ ցեղասպանությունը»: Շաֆակին արդարացրին, և նրա գործը կարճվեց, քանի որ մեղադրողը հայտարարեց, որ 301 հոդվածով նախատեսված հանցակազմ չկա (տե՛ս Algan, B. (2008) *The Brand New Version of Article 301 of Turkish Penal Code and the Future Freedom of Expression Cases in Turkey* // German Law Journal, Vol. 09, № 12, p. 2239): Սակայն հետագայում գործը տեղափոխվեց ավելի բարձր դատական աստիճան, և իշխանություններին հաջողվեց բեկանել այս որոշումը:

⁶¹ Տե՛ս Lea, R. (24 July 2006) *In Istanbul, a Writer Awaits her Day in Court* // The Guardian:

մասնավորապես հայերի ցեղասպանության հարցին: Է. Շաֆակը քաջ գիտակցում էր, որ թուրքական իշխանությունները երբեք չեն հասկանա իր՝ Թուրքիայում բաց և դեմոկրատական հասարակությանը աջակցելը և ազգայնականության, մեկուսացվածության ու այլատյացության բոլոր դրսևորումները մերժելը, հատկապես որ այս անհանդուրժողականությունն ու ագրեսիան խոսքի ազատության դեմ պաշտոնապես ամրագրված են իր երկրի քրեական օրենսգրքի 301 հոդվածում:

Վիճահարույց հոդվածը է՛լ ավելի վատ համբավ ձեռք բերեց այն բանից հետո, երբ այն կիրառվեց համաշխարհային ճանաչում ունեցող մարդկանց նկատմամբ, ինչպիսիք էին, օրինակ, նոբելյան մրցանակի դափնեկիր, ազգությամբ թուրք գրող Օրհան Փամուկը⁶², հայազգի լրագրող Հրանտ Դինքը, որը սպանվեց 2007 թ., և շատ ուրիշ հայտնի մտավորականներ: Ամենևին էլ պատահական չէ, որ Օրհան Փամուկը տխրահռչակ 301 հոդվածը և ընդհանուր ազգային շահերի մասին մեկ այլ օրինագիծ համարում է քրեական նոր օրենսգրքում ներդրված գաղտնի զենք՝ միջազգային

⁶² Նոբելյան մրցանակակիր Օրհան Փամուկը դատապարտվեց այն բանի համար, որ հրապարակավ հայտարարել էր. «30 հազար քրդեր և Օսմանյան կայսրության մեկ միլիոն հայեր են սպանվել Թուրքիայում»: Այս գործը հետագայում կարճվեց այն բանից հետո, երբ Արդարադատության նախարարը հրաժարվեց դատական գործ հարուցելու հրաման տալ (տե՛ս Algan, B. նույն տեղում, էջ 2238):

հանրության համար անտեսանելի, բայց և «պատրաստ գործողության այն դեպքում, եթե նրանք որոշեն դրանով ինչ-որ մեկի գլխին հարվածել»⁶³:

Ըստ Թուրքիայի Արդարադատության նախարարի՝ 2007 թ. առաջին չորս ամիսներին 1189 մարդ դատի է տրվել 301 հոդվածի հատկանիշներով⁶⁴: Գրողներ, լրագրողներ, հրատարակիչներ, որոնք արդարացիորեն իրենց մտահոգությունն էին հայտնում ազգայնամոլության տազնապալի ծավալների վերաբերյալ, ըստ հոդվածի՝ հաճախ մեղադրվում էին թուրքականությունը նվաստացնելու հարցում⁶⁵: Այս բոլոր միտումնավոր և ամոթալի արարքներին հետևեց շատերի ակնհայտ անհանգստության արձագանքը վատահամբավ 301 հոդվածով հարուցվող բազմաթիվ մեղադրանքների վերաբերյալ: Պարզ դարձավ, որ թուրք գրողների անձնական պաշտպանվածությունն ու ապահովությունը լրջորեն վտանգված են, և առաջադեմ մտածողները պահանջեցին

⁶³ Տե՛ս *Alert: Another Publisher Facing Charges under New Penal Code*. (November 2005) // IFEX (International Freedom of Expression Exchange).

⁶⁴ Տե՛ս TBMM TUTANAK DERGISI, 23. Donem 2. Yasama Yili 81. Birlesim, 25 March 2008. Տե՛ս նաև Algan, B. նույն տեղում, էջ 2239:

⁶⁵ Տե՛ս *Turkey: Update on Campaign to Abolish Article 301* (2008) // *Writers in Prison Committee Bulletin*. English Pen. 2006 թ. Փերիհան Մազդենը նույնպես մեղադրվեց «Բարեխիղճ ամարկությունը մարդու իրավունք է» հոդվածը տպագրելուց հետո: Հոդվածում նա բացահայտ հայտարարում էր, որ պաշտպանում է մարդու իրավունքները Թուրքիայում: (Տե՛ս *High-Profile Cases: Turkish Writer Orhan Pamuk Was Brought to Trial Regarding Statements about the Armenian Genocide*. (2015) INFOGALACTIC):

անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ արդարադատության ձեռքը տալու բոլոր նրանց, ովքեր սպառնում են այդ մտավորականներին:

Հոդվածը խստորեն քննադատվել է և՛ Թուրքիայում, և՛ դրա սահմաններից դուրս⁶⁶: «Amnesty International»-ի պնդմամբ՝ 301 հոդվածը ուղղակի սպառնալիք է ստեղծում Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածներով ամրագրված խոսքի ազատության համար⁶⁷:

2007 թ.՝ Հրանտ Դինքի սպանությունից հետո, Թուրքիայի փոխվարչապետ և արտաքին գործերի նախարար Աբդուլա Գյուլը ստիպված էր ընդունել, որ 301 հոդվածի հետ կապված խնդիրներ կան, և օրենքում փոփոխություններ են անհրաժեշտ⁶⁸: Թուրքական իշխանությունները պարտադրված էին բարեփոխել հոդվածը, որովհետև խոսքի ազատությունն ընդհանուր առմամբ դեմոկրատիայի հիմ-

⁶⁶ Sté u Davis, T. (March 2008) *Modernity Must be Protected through Modern Means*// Turkish Daily News:

⁶⁷ Sté u Turkey: *Article 301 Is a Threat to Freedom of Expression and Must be Repealed Now* (2005) // Amnesty International Public Statement:

⁶⁸ Sté u *FM Gül: Changes Must be Made to Article 301*. (January 2007) // Hürriyet:

նասյունն է, նաև այն գլխավոր սկզբունքը, որով որոշվում է տվյալ պետության՝ Եվրոպական միությանը անդամակցելու համապատասխանությունը: Հոդվածի 2008 թ. Ապրիլի 30-ին ներկայացված փոփոխված տարբերակը ներառում էր մի լրամշակում, ըստ որի՝ Արդարադատության նախարարի թույլտվությունը պարտադիր էր դառնում դատական գործ հարուցելու համար: Այս նորամուծությունն արվեց 301 հոդվածը չարաշահելու հավանականությունը կանխելու նպատակով, թեև թուրք մտավորականներն իրենք էլ կարծում էին, որ հոդվածի քաղաքական բնույթի պատճառով նախարարի թույլտվությունը միշտ չէ, որ կարող էր վստահելի երաշխիք լինել⁶⁹:

Ինչևէ, կարծես շատ բան չէր փոխվել լրամշակումից հետո: 2012 թ. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշում կայացրեց այն մասին, թե Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածում ներառված տերմինների շրջանակը, այնպես, ինչպես այն մեկնաբանում են դատական իշխանությունները, չափազանց լայն է և անորոշ, ուստի հոդվածը շարունակում է սպառնալիք մնալ խոսքի

⁶⁹ St' u Algan, B. (2008) *The Brand New Version of Article 301 of Turkish Penal Code and the Future Freedom of Expression Cases in Turkey* // German Law Journal, Vol. 09, N° 12, p. 2251:

ազատ արտահայտման իրավունքի առումով: 301 հոդվածը անհամապատասխան համարվեց օրենքի պահանջվող «որակական հատկանիշներին», քանի որ «բազմիմաստ տերմինների պատճառով դրա հետևանքները անկանխատեսելի են»⁷⁰: Դատարանը խոսքի ազատության իրավունքի ոտնահարում համարեց թուրք պատմաբան-հանրաբան, Հայոց ցեղասպանությանը առնչվող խնդիրների մասին բացահայտորեն գրող Ալթուղ Թաներ Աքչամի դեմ հետաքննությունը⁷¹: 2008 թվականի փոփոխությունների հետ կապված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշեց, որ «թեև *թուրքականություն* տերմինը փոխարինվել է *թուրք ազգ* կապակցությամբ, որևէ փոփոխություն կամ էական տարբերություն կարճես չկա այս հասկացությունների մեկնաբանության մեջ, որովհետև Վճռաբեկ դատարանում (Court of Cassation) դրանք նույն կերպ են ընկալվում»⁷²:

Ինչպես նշում է Բ. Ալզանը, 301 հոդվածը կարևոր է եղել և շարունակում է մնալ այդպիսին ոչ միայն իրավական, այլև քաղաքական առումով, քանզի անխուսափելի է, որ դրա կիրառությունը կտրուկ և անսպասելի փոփոխություն-

⁷⁰ Տե՛ս *ECtHR judgement (2012) // On Application No. 25520/07*:

⁷¹ Տե՛ս *ECtHR judgement of 25/10/2012 // Article 10 of ECtHR, paragraph 92*:

⁷² Տե՛ս *ECtHR judgement of 25/10/2012 // Article 10 of ECtHR, paragraph 93*:

ների ենթարկվի՝ պայմանավորված քաղաքական մթնոլորտում, նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքների դաշտում իրավական և մեկնողական վերաբերմունքի փոփոխություններով: Քննարկվող իրավական դրույթը, որի կիրառումն առնչվում է պետության ինքնիշխանության, պետական կառույցների և հատկապես դատական մարմինների կողմից մարդու իրավունքների հիմնարար արժեքները, այդ թվում՝ խոսքի ազատությունը հասկանալու և մեկնաբանելու կարևորագույն խնդիրներին, փաստորեն հիմնված է ազատությունը ոչնչացնելու արատավոր գաղափարի վրա⁷³:

Տասից ավելի տարի է անցել 301 հոդվածի «բարեփոխումից», սակայն ակնհայտ է, որ այդ հոդվածը խախտելու համար մեղադրվող անձանց քանակը գրեթե չի նվազել, իսկ դա նշանակում է, որ այն ձախողվել է որպես օրենք, քանզի Թուրքիայում խոսքի ազատության իրավունքը լիարժեքորեն չի գործում: Պարզ է, որ Թուրքիայի պետական մարմինները քաղաքական առումով կողմնակալ են, և խոսքի ազատության նրանց մեկնաբանությունը չի համընկնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տեսակետի

⁷³ Տե՛ս u Algan, B. նույն տեղում, էջ 2240:

հետ: Պետք է ենթադրել, որ խնդրի լուծումը ոչ թե տվյալ օրենքը կամ որևէ այլ օրենք փոփոխելու, այլ մարդկանց մտածողությունը փոխելու մեջ է:

301 հոդվածի հետագա քննությամբ և մեկնաբանությամբ կփորձենք ցույց տալ, որ 2008 թ. «բարեփոխումները» միանգամայն մակերեսային բնույթ էին կրում, և Թուրքիայի իշխանությունների ձեռքին այն դեռևս մնում է որպես այլախոհությունը ճնշող և ազգայնական շահերին ծառայող գործիք:

**ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 301 ՀՈՒՎԱԾԻ
ԼԵԶՎԱԿԱՆ ՄՏԱՇԱՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ
(2005 թ. և 2008 թ. անգլերեն տարբերակների
գուգադիր քննություն)**

Թուրքական իրավական համակարգին կարճ անդրադարձ կատարելուց հետո այժմ դառնանք այս գլխի հիմնական նպատակին և փորձենք երևան հանել թուրք օրենսդիրների կողմնակալ ու արգահատելի լեզվական քաղաքականությունը, որի գերագույն նպատակն է եղել օգտագործել բառերի ուժը հոգուտ Թուրքիայի արատավոր շահերի⁷⁴: Ստորև բերվում են Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածի 2005 թ. հունիսի 1-ի և 2008 թ. ապրիլի 30-ի տարբերակների անգլերեն տեքստերը.

Article 301 (June 1, 2005)

1. Public denigration of Turkishness, the Republic or the Grand National Assembly of Turkey shall be punishable by imprisonment of between six months and three years.

⁷⁴ Խնդիրը նախնական դիտարկման է ընթարկվել մեր հետևյալ աշխատանքում. Gasparyan S. (2018) *Manipulation of Ideas in and through Language // LAW 2018: Current Problems of Law and Legal Science / Eds. Boris Krivokapić, Dragan Čović, Nedo Dani lović, Belgrade, ICIM Publishing, pp. 333-353.*

2. *Public **denigration** of the Government of the Republic of Turkey, the judicial institutions of the State, the military or security structures shall be punishable by imprisonment of between six months and two years.*
3. *In cases where **denigration** of Turkishness is committed by a Turkish citizen in another country, the punishment shall be increased by one third.*
4. *Expressions of thought intended to criticize shall not constitute a **crime**.*⁷⁵

(Turkey: Article 301 2006:1)

Article 301 (April 30, 2008) by Article 1 of the Law no. 5759)

Degrading Turkish Nation, State of Turkish Republic, the Organs and Institutions of the State

1. *A person who publicly **degrades Turkish Nation, State of the Turkish Republic, Turkish Grand National Assembly, the***

⁷⁵ Հմմտ. հոդվածի այս տարբերակի թուրքերեն տեքստի հետ.

(1) Türklüğü, Cumhuriyeti veya Türkiye Büyük Millet Meclisini alenen aşağılayan kişi, altı aydan üç yıla kadar hapis cezası ile cezalandırılır.

(2) Türkiye Cumhuriyeti Hükümetini, Devletin yargı organlarını, askeri veya emniyet teşkilatını alenen aşağılayan kişi, altı aydan iki yıla kadar hapis cezası ile cezalandırılır.

(3) Türklüğü aşağılamanın yabancı bir ülkede, bir Türk vatandaşı tarafından işlenmesi halinde, verilecek ceza üçte bir oranında artırılır.

(4) Eleştiri amacıyla yapılan düşünce açıklamaları suç oluşturmaz.

St. u İşte 301'in Yeni ve Eski Hali, Hürriyet, 08.01.2008:

Government of the Republic of Turkey and the judicial bodies of the State shall be sentenced a penalty of imprisonment for a term of six months to two years.

- 2. A person who publicly **degrades** the military or security organisations shall be sentenced according to the provision set out in paragraph one.*
- 3. The expression of an **opinion** for the purpose of criticism does not constitute an **offence**.*
- 4. The conduct of an investigation into such an offense shall be subject to the permission of the Minister of Justice.⁷⁶*

(Penal Code of Turkey 2016:99)

Բառային մակարդակում իրականացված լեզվական կեղծարարությունը վեր հանելու նպատակով դիմում ենք տարբերակներում տեղ գտած այնպիսի միավորների համեմա-

⁷⁶ St' u Madde 301- (Değişik: 30/4/2008-5759/1 md.).

(1) Türk Milletini, Türkiye Cumhuriyeti Devletini, Türkiye Büyük Millet Meclisini, Türkiye Cumhuriyeti Hükümetini ve Devletin yargı organlarını alenen aşağılayan kişi, altı aydan iki yıla kadar hapis cezası ile cezalandırılır.

(2) Devletin askerî veya emniyet teşkilatını alenen aşağılayan kişi, birinci fıkra hükmüne göre cezalandırılır.

(3) Eleştiri amacıyla yapılan düşünce açıklamaları suç oluşturmaz.

(4) Bu suçtan dolayı soruşturma yapılması, Adalet Bakanının iznine bağlıdır.

St' u 8965, *Türk Ceza Kanunu, Kabul Tarihi, 26/9/2004*, Birinci Kitap, Genel Hükümler Birinci Kısım, Temel İlkeler, Tanımlar ve Uygulama Alanı, Birinci Bölüm, Temel İlkeler ve Tanımlar.

տական քննությանը, ինչպիսիք են՝ *denigration – degrade* (անարգանք – անարգել, նվաստացնել), *Turkishness – Turkish Nation* (թուրքականություն – թուրք ազգ), *The Republic – State of the Turkish Republic or State of the Republic of Turkey* (հանրապետություն – թուրքական հանրապետություն կամ Թուրքիայի Հանրապետություն), *thought – opinion* (միտք, դատողություն – կարծիք), *crime – offence* (հանցագործություն – իրավախախտում տերմինները): Այս քննությամբ պարզաբանվում է հոդվածի երկրորդ տարբերակում կատարված փոփոխությունների արդյունավետության հնարավորությունը՝ ի համեմատություն առաջին՝ 2005 թ. տարբերակի: Ստորև բերվող աղյուսակը տեսանելի է դարձնում զուգադրվող միավորները:

301 հոդվածի 2005 և 2008 թթ. տարբերակներում լեզվական առումով հետաքրքիր միավորների զուգադրության պատկերը

	Article 301 (2005)	Article 301 (2008)
1	<i>Denigration</i> (անարգանք)	<i>Degrade</i> (անարգել, նվաստացնել)
2	<i>Turkishness</i> (թուրքականություն)	<i>Turkish Nation</i> (թուրք ազգ)

3	<i>The Republic</i> (հանրապետություն)	<i>State of the Turkish Republic; State of the Republic of Turkey</i> (թուրքական հանրապետություն, Թուրքիայի Հանրապետություն)
4	<i>thought</i> (միտք, դատողություն)	<i>opinion</i> (կարծիք)
5	<i>crime</i> (հանցագործություն)	<i>offence</i> (հրավախախտում)

Իրավագիտական տեսանկյունից ակնհայտ նորություն է 2008 թ. տարբերակի վերջին մասը. *The conduct of an investigation into such an offence shall be subject to the permission of the Minister of Justice.* (Այս իրավախախտման մասով հետաքննությունը թույլատրվում է Արդարադատության նախարարի հրամանով): Այս մասի նպատակն է հանրային մեղադրողներին ետ պահել դատական գործ հարուցելու կամայական որոշումից նրանց դեմ, ովքեր քննադատում են կառավարությունը կամ փորձում են բացել Թուրքիայի պատմության մուտք էջերը: Ինչպես արդեն ասվել է, 301 հոդվածի 2008 թ. տարբերակը նման է Թուրքիայի նախկին քրեական

օրենսգրքի (1925-2005 թթ.) 159 հոդվածին, որտեղ նույնպես առկա էր Արդարադատության նախարարի թույլտվությունը ստանալու մասին կետը: Սակայն, ի տարբերություն 159 հոդվածի, 2008 թ. տարբերակ ներառված նոր կետը վերաբերում է թույլտվություն ստանալու պահանջին միայն հետաքննություն սկսելու համար: Դա նշանակում է, որ նախարարից բացի՝ Արդարադատության նախարարության որևէ այլ մակարդակի պաշտոնյա լիազորված չի լինելու վերահսկել «անցանկալի քաղաքացիների» դեմ դատավարություն սկսելու գործընթացը: Այնուհետև՝ երրորդ կետը, որը վերաբերում է մեկ այլ երկրում Թուրքիայի քաղաքացու կողմից թուրքականությունը հրապարակավ անարգելուն, հանվել է հոդվածի տեքստից:

Այս տարբերակում մեկ այլ փոփոխություն կարելի է համարել առավելագույն պատժաչափի նվազեցումը, ըստ որի՝ հոդվածի տակ ընկնող ցանկացած վիրավորանքի համար պահանջվում է վեց ամսից երկու տարի ազատազրկում: «Թուրքիայի քրեական օրենսգրքի համաձայն՝ երկու տարի կամ ավելի պակաս ժամկետով մեղադրական դատավճռով ազատազրկումը կարող է դատարանի հայեցողությամբ հետաձգվել: Կարելի է վստահ լինել, որ առավելագույն պատ-

Ժի նվազեցումով 301 հոդվածը ոտնահարելու համար կայացվող մեղադրական ցանկացած դատավճիռ կմտնի այս երկու տարվա սահմանափակման տակ, և հետևաբար՝ դրա ի կատար ածումը կարող է հետաձգվել»⁷⁷: Սակայն այս փոփոխությունները մակերեսային դուրս եկան և ընդամենը ուժեղացրին որոշ պնդումների հաղորդակցական ազդեցությունը՝ առանց լրջորեն բարելավելու դրանք:

301 հոդվածի 2005 թ. տարբերակը նախ և առաջ միտված էր հրապարակային անարգանքից պաշտպանելու տարբեր կառավարական կառույցները՝ Հանրապետությունը կամ Թուրքիայի Հանրապետության մեջլիսը, Թուրքիայի Հանրապետության կառավարությունը, իրավական կառույցները, ռազմական անվտանգության կառույցները և, ինչն ավելի զարմանալի է և չափազանց հավակնոտ, *թուրքականությունը*:

Մինչև անդրադառնալը այն հարցին, թե ինչու հոդվածի 2008 թ. տարբերակում *թուրքականությունը* փոխարինվեց *թուրք ազգ* կապակցությամբ, կատարվեցին նաև մի քանի այլ փոփոխություններ, քննության առնենք *denigration - to*

⁷⁷ Sté u Karcilioğlu, Kaan (2008) *Turkey: Article 301 of the Turkish Criminal Code Amended* // IRIS Legal Observations of the European Audiovisual Observatory:

degrade (անարգանք – անարգել, նվաստացնել) հանգուցային տերմինագույզը: Տարբեր աղբյուրներ⁷⁸ թուրքերեն *aşağılama* բառի անգլերեն թարգմանության համար տարբեր միավորներ են օգտագործում՝ *to humiliate, to insult, to deride*, և, ի վերջո, **denigration** սկզբնական փաստաթղթում (այսինքն՝ Թուրքիա, հոդված 301 2006:1) և **degrade** վերջնական փաստաթղթում, (այսինքն՝ Թուրքիայի քրեական օրենսգիրք – 2016:99): *Denigrate* բայի ստուգաբանությունը ցույց է տալիս, որ այն սերում է լատիներեն *dēnigrāre* (սևացնել, վարկաբեկել), *nigrāre* (սևացնել) և *niger* (սև) բառերից: Այն ունի հետևյալ իմաստները. 1. *անբարենպաստ խոսել մեկի մասին, նվազեցնել, թուլացնել համբավը*, 2. *անբարենպաստ խոսել մեկի մասին, քննադատել նվաստացնող, նսեմացուցիչ եղանակով, արատավորել, վարկաբեկել, ներկայացնել որպես արժեքից զուրկ կամ անկարևոր, թերազնահատել, անարգել, սևացնել*⁷⁹, 3. *նվաստացնել, նվազեցնել, թուլաց-*

⁷⁸ Տե՛ս *Turkey: Article 301: How the Law on “denigrating Turkishness” is an Insult to Free Expression* (2006) // Public Document. EUR 44/003/2006; Smith, T. W. (2007) *Leveraging Norms: The ECHR and Human Rights Reform in Turkey* // Human Rights Policies and Prospects in Turkey. Philadelphia: University of Pennsylvania Press, pp. 262-274; Lester, A. (2007) *Redefining Terror* // Sage Journals, Vol. 36, issue 2, pp. 103-107 և այլն:

⁷⁹ Տե՛ս *Word Reference Random House Learner’s Dictionary of American English* (2017):

նել համբավը, վարկաբեկել, անարդարացիորեն քննադատել կամ վիրավորել⁸⁰: Հետևաբար՝ *denigration* գոյականը մատնանշում է անարդար կերպով քննադատելու, վարկաբեկելու, սևացնելու և արատավորելու գործընթաց: *Denigration*-ը, որը իրավագիտական տեսանկյունից ընդունված է համարել *արգելված վարքագիծ*, ըստ էության, խոսույթային կաղապար է՝ «*վարկաբեկման դիսկուրս*», որը հաճախ է կիրառվում *դատավարական* գործընթացի *հռետորաբանության մեջ*՝ վիրավորելու կամ նսեմացնելու նպատակով⁸¹: Իհարկե, դեպքի մանրակրկիտ քննությունն կպահանջվի մինչև ապացուցվեն կամ հերքվեն վարկաբեկումն ու անարգանքը, հատկապես որ *denigration* բառի գործածությամբ *denigration of Turkishness (թուրքականության անարգում)* բառակապակցությունը չափից դուրս երկիմաստ է դառնում: Թուրքիայի մի շարք անհատների դեմ իրականացված վերը նշված դատական հետապնդումների քննությունից պարզ է դառնում, որ այս սահմանափակող արտահայտությունը ներմուծված է հնչող տարակարծությունները լռեցնելու նպատակով և սպառնում է խոսքի ազատության

⁸⁰ Տե՛ս *Collins Concise English Dictionary* (2017):

⁸¹ Horwitz, P. (2014) *Denigration as Forbidden Conduct and Required Judicial Rhetoric* // *Constitutional Law* JOTWELL, pp.1-3:

հիմնարար օրենքին: Հասկանալի է, որ եթե Հայոց ցեղասպանության մասին խոսող մարդիկ ազատագրվում են ըստ 301 հոդվածի՝ *թուրքականությունը, Հանրապետությունը կամ Թուրքիայի Հանրապետության մեջլիսը* վարկաբեկելու մասի, ուրեմն նրանք, անտարակույս, պետք է համարվեն խղճի բանտարկյալներ (prisoners of conscience):

Փորձելով *անարգումն ու վարկաբեկումը* սահմանազատել քննադատական կարծիքներից (որոնք չեն դիտվում որպես հանցագործություն)՝ 2008 թ. օրենքի նախագծի հեղինակները, առաջին և երկրորդ մասերի անգլերեն տեքստում դիմելով լեզվական շահարկման, *denigration* գոյականը փոխարինել են *degrade* (*անարգել, նվաստացնել*) բայաձևով, որն ըստ էության նույն իմաստն է արտահայտում.

1. *A person who publicly **degrades** Turkish Nation, State of the Turkish Republic, Turkish Grand National Assembly, the Government of the Republic of Turkey and the judicial bodies of the State [...]*
2. *A person who publicly **degrades** the military or security organisations [...]*

Ակնհայտ է, որ այս փոփոխությունը հողվածի բովանդակության մեջ որևէ բան չի ավելացրել, բացի նրանից, որ թուլացրել է տեքստի ընդհանուր հոետորաբանական ազդեցությունը և այն ներհատուկ բացասական ոճական երանգավորումը, որն առկա է *denigration*-ի հիմքում և, ըստ էության, շեշտադրել տվյալ հասկացությունը որպես հանցագործություն: *Degrade* (*անարգել, նվաստացնել*) բայը հոմանիշ է *denigrate* (*անարգել, վարկաբեկել*) բային⁸² և սովորաբար բացատրվում է որպես «*նվազեցնել կարգը, աստիճանը, կարգավիճակը, իջեցնել ցածր կամ պակաս ազդեցիկ մակարդակի, նվազեցնել բաղձալիությունը, հարգանքը*»⁸³:

Գործարանական տեսանկյունից 301 հողվածի երկու տեքստերն էլ իրավագիտական դիսկուրսի նմուշներ են, որոնց նպատակը օրենքի կիրառումն է: Եվ քանի որ այս փաստաթղթերն արտացոլում են ուժի և իշխանության հարաբերությունները հասարակության հետ, ուստի մեր հետազոտության համար շահեկան կլինի դրանք դիտարկել նաև դիսկուրսի քննադատական վերլուծության դիրքերից:

⁸² Տե՛ս *Word Reference Random House Learner's Dictionary of American English* (2017):

⁸³ Տե՛ս *Merriam-Webster Dictionary* (2017):

301 հոդվածի 2005 թ. տեքստը բաղկացած է չորս մասից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացված է պատմողական ասույթով: Գործարանական տեսանկյունից այս ասույթները գործում են որպես հաստատական խոսքային ակտեր՝ որոշակի խնդիրների առնչությամբ Թուրքիայի կառավարության դիրքորոշումը օրինականացնելու նպատակադրվածությամբ: Դրանք վերաբերում են հասարակական անցանկալի գործողության՝ անարդարացիորեն արված հրապարակային քննադատության, տվյալ դեպքում՝ հրապարակավ հնչեցրած անարգանքի (*denigration*) դրսևորմանը: Այս ասույթների պերլոկուտիվ (խտտողական-ներգործական) ազդեցությունն այն է, որ որևէ մեկն իրավունք չունի քննադատելու պետականությունը, բարձրագույն իշխանության կառույցները, որոնք քաղաքական գերիշխանություն ունեն Թուրքիայում (ինչպես, օրինակ, Հանրապետությունը կամ Թուրքիայի Հանրապետության մեջլիսը): Իրականում այս ազդեցությունն ավելի ակնհայտ է առաջին երեք մասերում, իսկ չորրորդում երկիմաստ և անորոշ ձևակերպումների շնորհիվ այն նվազում է. *Expressions of thought intended to criticise (դատողություններ, որոնց նպատակը քննադատելն է)*: Անկասկած, այստեղ նկատի են առնվում անուղղակի

քննադատության այն դեպքերը, երբ պետական իշխանության և պետականության նկատմամբ բացասական վերաբերմունքը արտահայտված է բառախաղի, ներակայման և ներիմաստի միջոցով: Հեշտ չէ սահմանազատել «քննադատելու մտադրությունը» և «քննադատման» իրական գործողությունը: Ուստի այս հաստատական ասույթը ներմուծելով հողվածի շարադրանք՝ օրենսդիրները ստեղծել են քողարկված «լեզվական սողանցք»՝ լեզվական նյութը սուբյեկտիվ մեկնաբանելու համար. մի բան է ասել և կատարել քննադատության պերլոկուտիվ (խոսողական-ներգործական) գործողություն, մեկ այլ բան՝ դա իրագործելու մտադրությունն ունենալ: Ինչևէ, հրապարակավ արտահայտված ցանկացած միտք, գաղափար, դատողություն կարելի է ընկալել կա՛մ որպես ուղղակի քննադատության օրինակ, կա՛մ պարզապես քննադատելու մտադրություն: Այս մտաշահարկային լեզվական քաղաքականությունը, ինչպես կարելի է կռահել, հնարավորություն տվեց իշխանություններին պատիժ գործադրելու որոշ անցանկալի ընդդիմադիրների

նկատմամբ և ներում շնորհելու ավելի պակաս անհաճո այլ ընդդիմադիրների⁸⁴:

301 հոդվածի 2008 թ. «բարեփոխված» տեքստը նույնպես բաղկացած է չորս մասից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացված է պատմողական նախադասությամբ: Այս տարբերակի քննությունը գործաբանական արժևորման դիրքերից ցույց է տալիս, որ այս ասույթները նախորդ տարբերակի ասույթների նման պետք է համապատասխանեն իրավական փաստաթղթերի պաշտոնական ոճին և գործառվեն որպես հուզարտահայտչականությունից կամ երկակի մեկնաբանությունից զերծ հաստատական ասույթներ: Ըստ էության, դրանք պետք է արտահայտեն պետության ճիշտ քաղաքականությունը: Սակայն վերլուծությամբ պարզվում է, որ այս հաստատական ասույթների կառուցվածքային կա-

⁸⁴ 2006 թ. հինգ մտավորականի մեղանդրանք ներկայացվեց պետական կառույցները անարգելու համար: Մասնավորապես քննադատել էին դատարանը, որը 2005 թ. կարգադրել էր փակել Ստամբուլի Բիլգի համալսարանում կայանալիք մի գիտաժողով՝ նվիրված Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործված ոչնչացման աննախադեպ գործողություններին առնչվող խնդիրների քննությանը: Առաջ քաշված մեղադրանքները ենթադրում էին մինչև 10 տարի ազատազրկում: Քանի որ դա, ըստ ժամկետների սահմանափակման օրենքի, գերազանցում էր նախատեսվածը, 2006 թ. ապրիլի 11-ին դատարանը կարճեց նրանցից չորսի գործը, իսկ հինգերորդը հանրությանը քաջ հայտնի գիտնական Մուրատ Բելգեն, 2006 թ. հունիսի 8-ին անմեղ ճանաչվեց (տե՛ս *Murat Belge, a Renowned Turkish Academic, Leaving Turkey as 'Scholar at Risk'* / SCF, February 15, 2018):

դապարը փոխվել է՝ առաջացնելով խոսքային ակտերի ներակա գործաբանական դրափոխություն: Փոփոխված տարբերակի տեքստում պարզ ընդարձակ նախադասությունները փոխարինվել են սահմանափակող որոշչային երկրորդական նախադասություններով: Ի՞նչ է փոխվել այստեղ: Ըստ էության՝ ոչինչ, քանի որ սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասության մեջ գործողություն կատարողը այնուամենայնիվ նշվում է, թեև անորոշ ձևով. *A person who [...]* (*Այն անձը, որը...*): Եվ քանի որ գլխավոր նախադասության մեջ ստորոգյալն արտահայտված է կրավորական սեռի բայով, գործողություն կատարողն ինքնաբերաբար դառնում է գործողությունն իր վրա կրողը. *shall be sentenced* (*կդատապարտվի*): Միանգամայն պարզ է, որ վերը նշված գործողությունը որոշակի բացասական հետևանք ունի և պատժի հեռանկար է պարտադրում գործողություն կատարող անցանկալի անձին: Սահմանափակող որոշիչ երկրորդական նախադասության բայն անվանում է այն անընդունելի գործողությունը (*publicly degrades – հրապարակալ նվաստացնում է*), որի համար տվյալ գործողությունը կատարողը կպատժվի:

Ինչպես տեսնում ենք, քննվող հաստատական ասույթները, որոնք պնդման խոսքային ակտեր են, բավարարում

են հորդորող խոսքային ակտերի հաջողությունն ապահովող հետևյալ նախադրույթներին.

- *ստորոգման իմաստի նախադրույթ*, որը կապված է լսողի ապագա գործողության հետ,
- *նախապատրաստական նախադրույթ*, երբ խոսողը, որն ավելի մեծ հեղինակություն ունի, քան լսողը, կարծում է, որ լսողը կարող է կատարել տվյալ գործողությունը,
- *անկեղծության նախադրույթ*, երբ խոսողն ուզում է, որ լսողը չկատարի տվյալ գործողությունը,
- *էական նախադրույթ*, երբ փորձ է արվում լսողին ստիպելու, որ նա տվյալ կոնկրետ գործողությունը չանի:

Հորդորի այս խոսքային ակտերը այլ խոսքային ակտերի նման համապատասխանում են Ջ. Սըրլի առաջադրած «աշխարհն ըստ բառերի» սկզբունքին, երբ աշխարհը պետք է փոփոխվի՝ ասույթի ստորոգման իմաստին համապատասխանելու համար, ինչպես օրինակ՝ հրամանի, նախազգուշացման դեպքերում, ի տարբերություն այնպիսի պնդումների, որոնց հիմքում «բառերն ըստ աշխարհի» սկզբունքն է, երբ ասույթի ստորոգման իմաստն է համապատասխա-

նեցվում աշխարհի դրվածքին, օրինակ՝ պնդելու, հաստատելու խոսքային գործողություններ կատարելիս⁸⁵: Այս նկատառումների համաձայն՝ նշված հաստատական ասույթները մոտենում են անուղղակի նախազգուշացումներին, այն է՝

Հրապարակավ մի՛ անարգեք (նվաստացրեք) թուրք ազգը, Թուրքիայի Հանրապետությունը, Թուրքիայի Հանրապետության մեջլիսը և պետական դատական մարմինները, այլապես դուք կդատապարտվեք ազատագրկման վեց ամսից մինչև երկու տարի ժամկետով:

Տվյալ ասույթները կարելի է մեկնաբանել նաև որպես անուղղակի սպառնալիք, որտեղ գլխավոր նախադասությամբ անվանվում է վնասաբեր գործողությունը, իսկ «եթե» շաղկապով կապվող պայմանի պարագա երկրորդական նախադասությամբ ներակայվում է ապագա հնարավոր անցանկալի գործողություն, որի պատճառով գործողություն կատարողը կարող է վնաս կրել: Այսպես՝

⁸⁵ Տե՛ս Searle J. R. *A Taxonomy of Speech Acts*// Expression and Meaning: Studies in the Theory of Speech Acts. CUP, Cambridge, 1979, pp. 1-19:

*Եթե դուք հրապարակավ անարգեք (նվաստացնեք) թուրք ազգը, Թուրքիայի Հանրապետությունը, Թուրքիայի Հանրապետության մեջլիսը և պետական դատական մարմինները, **դուք** կդատապարտվեք ազատազրկման վեց ամսից մինչև երկու տարի ժամկետով:*

Իլլոկուտիվ (խոսողական-կատարողական) ակտի այսպիսի գործաբանական դրավոխությունները կարելի է մտաշահարկային անվանել, քանզի ոչ միայն իլլոկուտիվ իմաստը արտահայտելու եղանակն է փոխվում ուղիղից անուղղակիի, այլև խոսքային ակտի իրական իմաստն է քողարկվում, և այն դառնում է երկիմաստ: Ինչ վերաբերում է խոսքային ակտերի պերլոկուտիվ (խոսողական-ներգործական) իմաստին, կարող ենք վստահաբար նշել, որ 2008 թ. տարբերակում խոսքային ակտերը նույնպիսի ազդեցություն են գործում՝ արտահայտելով արգելք, որն այստեղ ավելի շեշտադրված է դարձել: Ուրիշ խոսքով՝ նախադասության կառուցվածքը և փաստաթղթի բառային ձևակերպումները փոխելով՝ հեղինակներն այն ավելի արտահայտիչ և կատեգորիկ են դարձրել: Ըստ այդմ՝ փաստաթղթի գործաբանական կառուցվածքն ավելի առարկայական է ստացվել, իսկ հարկ եղած դեպքում ուժի գործադրումը՝ ավելի արդյունավետ:

Ուստի կարող ենք եզրակացնել, որ 2008 թ. տարբերակում դիտարկելի է լեզվի չարաշահում, նենգ ուղղորդում, որոնց նպատակն է լեզվի շահարկված կիրառման միջոցով ամրապնդել իշխանությունը:

Այս տարբերակի երրորդ մասում հաստատական ասույթը փաստորեն կրկնում է 2005 թ. տարբերակի չորրորդ մասը՝ որոշ վերաձևակերպմամբ, ինչը, սակայն, մտածված մտաշահարկային քայլ է: Եթե փորձենք քննարկել, թե ինչու է *intended to criticize* (*քննադատության միտված*) արտահայտությունը փոխարինվել *for the purpose of criticism* (*քննադատելու նպատակով*) կապակցությամբ, ապա դժվար չէ հասկանալ, որ մտադրված գործողությունը կամ մտադրությունը այն է, ինչ մարդ ուզում է անել, իսկ նպատակը՝ այն շարժառիթը, որը նրան մղում է ինչ-որ բան անելու: Ըստ վերաձևակերպված տարբերակի՝ երբ մեկն արտահայտում է իր անձնական *կարծիքը* որևէ երևույթի մասին այն քննադատելու նպատակով, ապա այդպիսի գործողությունը պատժելի չէ:

Ի տարբերություն *thought* (*միտք, դատողություն*) բառի, որն ավելի մոտ է գիտակցված մտավոր գործողություններին, *opinion* (*կարծիք*) միավորը, ինչպես գիտենք, այն է, ինչ մարդ մտածում կամ զգում է: Այսինքն, դա նրա անձնական

տեսակետն է կամ վերաբերմունքը: *Կարծիքը*, կարելի է ասել, մարդու մտածողության ավելի սուբյեկտիվ արտահայտությունն է, և հետևաբար կարող ենք եզրակացնել, որ այս կետում օրենսդիրները իրականում պահպանել են լեզվական նյութի սուբյեկտիվ մեկնաբանության այն գաղտնի «լեզվական սողանցքը», որը գոյություն ուներ 2005 թ. տարբերակում:

Այժմ փորձենք քննության առնել այն հակասականությունն ու անորոշությունը, որն առկա է *Turkishness* (*թուրքականություն*)⁸⁶ տերմինի իմաստում, ինչպես նաև դրա դատաիրավական մեկնության մեջ: Առաջին տարբերակի հեղինակները *Turkishness* (*թուրքականություն*) տերմինի նախընտրությունը *Turkish nation* (*թուրք ազգ*) տերմինակապակցության նկատմամբ բացատրում են նրանով, որ առաջինը մատնանշում է մի ընդհանրացված ամբողջություն, որի խորքային իմաստում կարևորվում է Թուրքիայում և դրանից դուրս ապրող թուրքերին բնորոշ ընդհանուր մշակույթը: Իսկ *Turkish nation* (*թուրք ազգ*) որոշչային բառակապակցությունը նեղացնում է տերմինի իմաստը՝ առաջ-

⁸⁶ *Turkishness* բառը ԵԱՀԿ-ի պաշտոնական թարգմանությամբ ներկայացվում է որպես «թուրք լինել»: Տե՛ս *OSCE Representative on Freedom of the Media-Review of the Turkish Penal Code*. (2005) // Organization for Security and Co-operation in Europe. Vienna, p. 10:

նային տեղ տալով էթնիկ ընդհանրությանը՝ առանց շեշտադրելու մշակութայինը⁸⁷: Այս փաստարկի հիմքում, ինչպես համոզված է Է. Տամվակին, ակնհայտ են պանթուրքիզմի և դրա գլխավոր ջատագովներից մեկի՝ Աթաթուրքի որդեգրած գաղափարներն ու արժեքները, հատկապես որ հոդվածում լիովին բացակայում է որևէ ցուցում, թե ինչպես և ինչ հանգամանքներում պետք է այն կիրառվի⁸⁸: Եվ իրոք, *Turkishness* տերմինի հմուտ մտաշահարկումը անհնար է դարձնում դրա հստակ մեկնաբանությունը, քանզի ո՛չ թուրքականությունը, ո՛չ էլ դրա բաղկացուցիչ տարրերը չեն կարող պարզորոշ սահմանվել, իսկ առանց հստակ սահմանման հեշտ չէ որոշել, թե ում համար են թուրքականությունը անարգող, վարկաբեկող: Դա նշանակում է, որ քաղաքական առումով ոչ ճշգրիտ բառակապակցությունը լուրջ հարված է խոսքի ազատությանը և դրա կոպիտ խախտում: Վերը նշված դատական գործերը և հետապնդումները գալիս են հաստատելու, որ հղում անելով *թուրքականություն* հասկացությանը՝ իշխանությունները նպատակ են ունեցել իրենց գործողությունները կառուցելու ցեղային և կրոնական գաղա-

⁸⁷ Sê'u Algan, B. (2008) *The Brand New Version of Article 301 of Turkish Penal Code and the Future Freedom of Expression Cases in Turkey* // German Law Journal, Vol. 09, N° 12, p. 2242:

⁸⁸ Sê'u Tamvaki, E. (2009) *A Law and Literature Approach to Oppression of Identity in Turkey*, p. 24:

փարների հենքի վրա: Դա պարզապես ուղղված էր հակադիր կարծիք ունեցող մարդկանց դեմ, այն մարդկանց, որոնք փորձում էին գտնել Թուրքիայի պատմական ճշմարտությունը և ընդունել այն: Հասկացական առումով՝ *Turkishness* տերմինը շեշտում է ազգությունը՝ պայմանավորված ցեղային, կրոնական, լեզվական, մշակութային և նպատակադրումային հատկանիշներով: Նույն ձևով, *Turkish nation* (*թուրք ազգ*) նոր ներմուծված բառակապակցության մեջ *nation* (*ազգ*) բառը մատնանշում է մարդկանց, ցեղ, ազգակիցների խումբ կամ մարդկանց խմբավորում՝ օժտված այնպիսի ընդհանուր հատկանիշներով, ինչպիսիք են լեզուն, ավանդույթները, սովորույթները և էթնիկ ծագումը: Ազգը մշակութային-քաղաքական համայնք է, որը գիտակցում է իր ինքնությունը, միասնականությունը և որոշակի շահերը: *Turkishness* հասկացության համեմատ *ազգը* ավելի անդեմ է, վերացական, և դրա ներկայացուցիչները քաղաքական առումով ավելի բացահայտ են, քան էթնիկ խմբի պարագայում⁸⁹: Այստեղից հետևում է, որ *Turkishness* և *Turkish nation* միավորները նույն իմաստն ու նույն բովան-

⁸⁹ Sté u James, P. W. (1996) *Nation Formation: Towards a Theory of Abstract Community*. London: Sage; Hroch M. (1996) Nationalism and National Movements: Comparing the Past and the Present of Central and Eastern Europe // Nations and Nationalism, N 2 (1), pp. 35-44:

դակությունն ունեն և գաղափարի առումով նույնպես տարբեր չեն⁹⁰, և չնայած հեղինակների այն պնդմանը, թե *Turkishness* բառն ավելի վերացական է, և դրա փոխարինումը *Turkish nation* կոնկրետ ձևակերպմամբ «կընդլայնի խոսքի ազատության սահմանները»⁹¹, իրականում այդպես չեղավ:

Խոսելով *թուրքականություն* մշակութային կառույցի մասին գործաբանության և դիսկուրսի քննադատական վերլուծության տեսանկյունից՝ հարկ է նշել, որ դրա մեկնաբանությունը հիմնված է լսողի կամ ընթերցողի կանխենթադրույթային դաշտի և հենքային գիտելիքների վրա: Այս տիպի գիտելիքը մասնավորապես մշակութափոփոխ է և վերացական: Ուստի օտարերկրացու համար դժվար է կողմնորոշվել, թե պատմական ո՞ր իրադարձությունները կամ փաստերը, մշակութային ո՞ր արժեքները կամ հասարակական գործիչներին այս կամ այն գնահատականը տվող ո՞ր գաղափարներն են, որոնք պետք է *թուրքականության* անարգում, վարկաբեկում համարվեն: Բնականաբար, այս լեզվական միավորի կիրառությամբ լայն հնարավորություն է ստեղծվում հրա-

⁹⁰ Այս հարցերին անդրադառնում է նաև Է. Տամվակին: Տե՛ս Tamvaki, E. (2009) նույն տեղում, էջ 26:

⁹¹ Տե՛ս CGK, E. 1998-9/70, K. 1998/156, *Judgement of 5 May 1998*. Cf. also Algan, B. Ibid, p. 2242:

պարակային ուղղվածություն ունեցող խոսքը սահմանափակելու համար:

Հոդվածի 2005 թ. տարբերակի երրորդ մասում երեք տարվա պատժաչափի սահմանումը նույնպես պայմանավորված է եղել քաղաքական իրադրությամբ, քանզի Թուրքիայի բազմաթիվ քաղաքացիներ, արտագաղթելով աշխարհի տարբեր երկրներ, իրենց բացասական վերաբերմունքն ու ընդդիմադիր գաղափարներն են արտահայտում թուրքական իշխանությունների վարած քաղաքականության նկատմամբ: Նրանց համար նախատեսվող պատժի պատճառը թաքնված է *Turkishness* բառի խորքում, որով ներմուծված գաղափարը, ինչպես արդեն նշվել է, աղոտ է շատ եվրոպացիների և ամերիկացիների համար: Դա նշանակում է, որ թուրքական կառավարության պնդմամբ՝ մեկ այլ երկրում իր քաղաքացիների արտահայտած ցանկացած գաղափար կարող է որակվել որպես «*թուրքականության անարգում, վարկաբեկում*» և, հետևաբար, կարող է գործ հարուցվել Թուրքիայի պաշտոնական շրջանակներին անհաճ գաղափարների ու տեսակետների համար: Դժվար չէ նկատել, որ այս պնդումը մարդու իրավունքի, մասնավորապես՝ իր կարծիքը հրապարակավ ազատ արտահայտելու իրավունքի ակնհայտ խախտում է:

Նույն ինքնավստահ համոզմունքով՝ նախագծի հեղինակները ձևացնում են, թե հենց խոսքի ազատության սահմանների ընդլայնման մտադրությամբ է պայմանավորված *the Republic (Հանրապետություն)* տերմինի փոխարինումը *State of the Turkish Republic (Թուրքական Հանրապետություն)* և *the Republic of Turkey (Թուրքիայի Հանրապետություն)* վարչաքաղաքական անվանումներով⁹²: Ըստ Word Reference Random House Unabridged Dictionary of American English բառարանի՝ *republic (հանրապետություն)* բառը մեկնաբանվում է որպես «*պետություն, որտեղ գերագույն իշխանությունը գտնվում է քվեարկելու իրավունք ունեցող մի խումբ քաղաքացիներից կազմված խմբի ձեռքին և կառավարվում է անմիջականորեն կամ միջոտրդավորված կերպով նրանց ընտրած ներկայացուցիչների կողմից*»⁹³: Մինչև նույն բառարանում *state (պետություն)* վարչաքաղաքական միավորը սահմանվում է որպես «*քաղաքականապես միավորված մարդիկ, որոնք զբաղեցնում են որոշակի տարածք*»: Ըստ Word Reference English Thesaurus բառարանի⁹⁴՝ այս երկու տերմինները հոմանիշներ են. Հանրապետություն =

⁹² Տե՛ս CGK, E. 1998-9/70, K. 1998/156, judgement of 5 May 1998:

⁹³ Տե՛ս Word Reference Random House Unabridged Dictionary of American English. (2017):

⁹⁴ Տե՛ս Word Reference English Thesaurus. (2017):

պետություն, դեմոկրատական պետություն (republic = state, democratic state): Հետաքրքրական է, որ Թուրքիայի Վերաքննիչ դատարանի որոշումներից մեկում նույնպես նշվում է, որ «*հանրապետություն*» տերմինով նկատի է առնվում «*Թուրքիայի Հանրապետությունը*»⁹⁵: Ուստի պետության համբավը հրապարակավ վիրավորելը նույնն է, ինչ հանրապետությունը վիրավորելը⁹⁶: Այնպես որ, բառերի այս վերաձևակերպումը համատեքստի բովանդակությունը բարելավելու առումով ոչ մի կերպ հնարավոր չէ արդարացնել: Շահարկումն ընկած է այն կեղծ գաղափարի հիմքում, որ *State of the Turkish Republic* կոնկրետ արտահայտությունն իբրև թե նպաստում է խոսքի ազատությանը, իսկ *republic* միավորը իր վերացական բնույթի շնորհիվ՝ ոչ: Ինչպես շեշտվում է «Amnesty International»-ի հաղորդագրության մեջ, «Թուրքիայի քրեական օրենսգրքի 301 հոդվածը երկար ժամանակ եղել է խոսքի ազատությանն առնչվող ամենախնդրահարույց հոդվածներից մեկը»⁹⁷: Ռեֆորմների արդյունքում տեղ գտած տեքստային փոփոխությունները և նույնիսկ այն լրացուցիչ պահանջը, որ դատական գործ

⁹⁵ Տե՛ս նույն տեղում:

⁹⁶ Տե՛ս Algan, B. նույն տեղում, էջ 2242:

⁹⁷ Տե՛ս *Amnesty International* (2013) *Turkey: Decriminalize Dissent. Time to Deliver on the Right to Freedom of Expression*. London: Amnesty International Publications:

սկսելուց առաջ անհրաժեշտ է ստանալ Արդարադատության նախարարի հրամանը, էական ազդեցություն չունեցան 301 հոդվածի ո՛չ բովանդակության, ո՛չ էլ կիրառական դաշտում թաքնված միտումները բացատրելու առումով: Շինծու երաշխիքներից ոչ մեկը բավարար չեղավ այս հոդվածը ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի՝ խոսքի ազատության իրավունքի հետ համատեղելի համարելու⁹⁸:

Նախնական տարբերակի չորրորդ մասը՝ *Expressions of thought intended to criticize shall not constitute a crime* (Մտքի, դատողության այն արտահայտությունները, որոնք քննադատելու մտադրություն ունեն, հանցագործություն չեն համարվի), և վերջնական տարբերակի երրորդ մասը՝ *The expression of an opinion for the purpose of criticism does not constitute an offence* (Քննադատելու նպատակով արտահայտված կարծիքը իրավահաստում չի համարվում), միտված են ընդգծելու խոսքի ազատությունը, սակայն միևնույն ժամանակ դրանք վիճահարույց խնդիրներ են առաջադրում առ այն, թե որ գործողությունները կարելի է համարել քննադատություն (ոչ պատժելի), իսկ որը՝ վարկաբեկում (պատ-

⁹⁸ Տե՛ս նույն տեղում:

ժելի), թեև հստակ է, որ Հայոց ցեղասպանության մասին ճշմարտության բացահայտումը պատժելի հանցանք չպետք է համարվի: Բայցևայնպես, բուն նպատակը կրկին տարակարծությունը ազատ արտահայտելու հնարավորությունների սահմանափակումն ու որոշակի քաղաքական նպատակների հասնելն է:

Ինչ վերաբերում է *thought* (*միտք, դատողություն*՝ նախնական տարբերակում) և *opinion* (*կարծիք*՝ վերջնական տարբերակում) բառազույգի լեզվաբանական արժևորմանը, ապա ակնհայտ է, որ դարձյալ գործ ունենք բռնի, մասնավորապես՝ *opinion* տերմինի մտաշահարկային ու մոլորեցնող կիրառության հետ: Հետազոտությամբ պարզվում է, որ *thought* (*միտք, դատողություն*) անհաշվելի գոյականը սովորաբար բացատրվում է որպես.

1. *մտավոր գործունեության արդյունք,*
2. *որոշակի տեղում, որոշակի դասի կողմից կամ որոշակի ժամանակ արված մտավոր գործունեություն կամ կարծիք,*
3. *մտածողության եզակի գործողություն կամ արդյունք,*
4. *մտածողության, մտավոր գործունեության, խորհրդածության գործողություն կամ գործընթաց,*

5. մտադրություն, նախագիծ կամ նպատակ,
